

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹ ԱԹԵՐԹ

Ազգային, Գրական, Քաղաքական, Գիտական,

54^{րդ} ՏԱՐԻ, Ե. ՇՐՋԱՆ

ԹԻԻ I

3 ՅՈՒՆՈՒԱՐ 1904

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԿԵԱՆՔԻ ԴՐՈՒԱԳՆԵՐ. Յակոբիկ	Գ. ԶՕՀՐԱՊ
ԱՄԱՆՈՐԻ ԱՌԻԻ	ՔՐԻՋԱՆԹԵՄ
Ապափնարանին արձագանգը	Լ. ԿԻՐԵՂԵԱՆ
ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ	
Զիւնը	Մ. ԱՃԼՄԵԱՆ
Ծնունդի վարդեր (թարգմ.)	Մ. Ո.
ԴԵՂԵՅԻԿ (Հոգեբանական նորավեպ)	Վ. ՄԱԼԵՋԵԱՆ
Վառարանիս անկիւնէն	ՄԵՆԱՍԷՐ

Խմբագրական նոթեր

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԱՍԻՍ Շաբաթաբերի տարեկան բաժանորդագրին է Կ. Պոլսոյ համար ֆառսուն դր. եւ գաւառներուն համար յիսուն դր., կանխիկ վճարելի: Արտասահման 12 Յրանք կամ 5 բուլլի: Թղթաստրական ծախքը Խմբագրութեան վրայ է: Վեցամսեայ բաժանորդագրութիւն չընդունուիր: Բաժանորդագրութիւնները կը սկսին ամէն ամսոյ մէկին: ՄԱՍԻՍ հրատարակ կ'ելլէ ամէն շաբաթ առտու: Այն բաժանորդները որոնք պակաս քերք ստացած են, պէտք է իսկոյն իմացնեն Խմբագրութեան: Ժամանակ անցնելէ վերջ՝ այս տեսակ առարկութիւնները նկատողութեան չեն առնուիր:

Զի հրատարակուած ձեռագիրները ետ չեն դարձուիր:

ՄԱՍԻՍԻ մէջ կ'ընդունուին նաեւ ծանուցումներ, դիւրամասշտիկ պայմաններով:

Զեմ-Քէ ԿՐ. ՇԱԽՈՒԻ ՀԱՏԻ ԲԱՌՍՈՒՆ ՓԱՐԱՅԻ

Հասցէ

درعليه ده غلطه ده (ماسيس) غرضه سى اداره سى


ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԱՍԻՍԻ

Կ. Պոլիս, Ղալաթիա

Rédaction de la Revue MASSIS

Galata, Constantinople

LA CONFIANCE



ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵԱՆՔԻ ԴԷՄ

Ապահովագրական այս ընկերութիւնը, որ հաստատուած է ու կը գործէ Ֆրանս. Կապիտալի թիւ 56,000,000 ֆր. եւ կեանքի ծիւղին համար 36,000,000 ֆր.:

ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍ մէկն է Եւրոպայի ամէնէն պատուաւոր եւ ամէնէն վստահելի ապահովագրական մեծ ընկերութիւններէն, եւ ուր որ մասնաճիւղ հաստատուած է՝ միշտ գոհ ձգած է իր բոլոր յաճախորդները, իր կատարեալ ուղղամտութեամբը եւ կանոնաւոր գործառնութիւններով:

Այս վաղեմի ընկերութիւնը մեծ վարկ կը վայելէ ամէն կողմ. եւ իր գործառնութեանց ու վստահելիութեան վրայ գաղափար մը տալու համար թուենք մէկ քանին այն հանրածանօթ հաստատութիւններէն, որոնք ապահովագրուած են ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍի:

Ֆրանսայի նահանգներու եւ գաւառներու կարգ մը պաշտօնատուններէն զատ, Բարիզի՝ Օրէրա, Վօտվիլ, Նուվօթէ, Ամպիկիւ, Ֆօլի-Տրամաթիք եւայլն թատրոնները, նաեւ Պօռտոյի, Թուլուզի, Լիոնի, Մարսիլիայի, Նանդի, Նիսի, Ալճէրիոյ, Բուէնի, եւ ուրիշ տեղերու մեծ թատրոնները:

Պօն Մարշէն, Լուվրի վաճառատունները, Բիկմայիոնը, Բրէնթանի, Պէլ-Ժառարինիէռի, Օթէլ, տը Վիլի եւ Սամարիթէի մեծ վաճառանոցները:

Թրանսաթլանթիք, Հովր-Մարսիլիա նաւարկութեան, Մովային Փոխադրութեանց, Ֆրանսական Թրանսպօրտացիոն, ինայողական երկաթուղիի ընկերութիւնները:

Մասնաւորապէս ուշադրութեան առնուելիք պարագայ մըն է որ ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍ ընկերութիւնը, իր Կազմական Կանոնադրին համաձայն, պարտաւոր է ամէն վեց ամիսը անգամ մը իր ելմտական կացութիւնը ենթարկել Ֆրանսայի Առեւտրական Նախարարութեան քննութեանը. նոյնպէս Սէնի քաղաքապետութեան, Բարիզի Առեւտրական Սենեակին եւայլն: Ընկերութեան դրամատունն է Բրէտի Լիօնէն:

Սոյն ընկերութեան Պոլսոյ կողմի գործակալութիւնը ստանձնած է մեր հրապարակին վրայ իր պատուաւորութեամբը ծանօթ

ԳԱՌՆԻԿ ԱՃԱՌԵԱՆ

Որուն պէտք է դիմել՝ թէ՛ հրդեհի եւ թէ՛ կեանքի ծիւղին վերաբերեալ ապահովագրութեանց կամ տեղեկութեանց համար: Գ. Աճառեան կը վարէ նոյնպէս Compagnie d'Assurances générales Maritimes ծովային ապահովագր. ընկերութեան Պոլսոյ կողմի գործակալութիւնը:

Հասցե. — Պօլիս. Մահմուտ փաշա, Պէօյիւք Եւլմազ խան, թիւ 14, Լա Դօնֆիանս ապահովագր. ընկ. Դրասենեակը:

Դառնիկ Աճառեան կը վարէ նաեւ, իր անձնական սեփականութիւնը Էդոգ անքիֆաի վաճառատուն մը, Պօլիս, Շուկայ, Մուհամբազաճըլար, թիւ 46, ուր գաւառներէն առուծախի յանձնարարութիւններ կ'ընդունին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԻԿԱՆ ԴԵՄՈԿՐԱՏԻԿԱՆ ՊԱՐԹԻԱ

ՕՍՄԱՆԵԱՆ ՇԱՔԱՐԱՎԱԾ ԲԵՐԱՅԻ

Սոյն հանրածանոթ շաքարավաճառը՝ Բերայի շիտակ ճամբան, թիւ 54, իր խանութը ընդարձակած ու ձօնացուցած է, թէ՛ իբրեւ բաքիսըռի եւ թէ՛ իբրեւ շաքարավաճառ, աւելի գոհ ձգելու համար իր բաղմաթիւ յաճախորդները։ Ամրան եղանակին մէջ, համեղ պողպատեղանքներու պէսպիսութիւն մը կայ ցորեկ եւ գիշեր։

ՀԱՅԻ ՍՍՐԻՄ Օսմ. շաքարագործը ձօն միջերը մը ունի հարսանեկան շաքարեղէններու, ընտիր տեսակէ, ու մասնաւորապէս յանձն կ'առնէ հարսանեկան հանդէսներու առթիւ ո՛չ միայն անոնց հայթայթումը՝ այլ նաեւ մատուցումը եւ սպասարկութիւնը տուներու մէջ։

Միակ մասնագիւղ, Ղալաթիա. Թօփճըլար Ճատտէսի, Թ. 101։

29—30



Անկարելի է որ ընտանիք մը քառանց կարի մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ մը աւնենայ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց եւ տաղաւկի աղբիւր մըն է։

Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

ՍԻՆԿԷՐ

ՀԱՅԹԱՅԹԻԶ ԿԱՅՍ. ՊԱՆԱՏԱՆ

The Singer Manufacturing Cie.

Ձեռքի, ոտի ու ոտի եւ ձեռքի միանգամայն մեքենաներ կը գտնուին։

մեքենան լաւագոյնն է. սոյն մեքենան ամենէն աւելի կատարելագործուածը, հաստատունը եւ դիւրագործածելին ըլլալուն՝ բովանդակ աշխարհի մէջ՝ ամէն ոք Սինկէրի մեքենաները կը գնէ։

Սինկէրի մեքենաները կը ծախուին միմիայն Սինկէր Ընկերութեան վաճառատանց մէջ՝

ՍԻՆԿԷՐԻ
ՄԱՍՆԱՎԱՇԱԽՈՐԴՆԵՐ

- | | | |
|---------|---|--|
| ԲԵՐԱ. | } | 1. Մեծ փողոց, Պօն Մառէի դէմ, Թ. 343 եւ 343 կրկին. |
| | | 2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիպէին դէմ. |
| ԿԱՎԱԾԱ. | } | 1. Սինկէր խան, Թիւնէլին ետեւը. |
| | | 2. Դարաքէօյ, Թրամվէյին կայարանին դէմ. |
| ՊՈԼԻՍ | } | 1. Սուլթան Համամ, Թ. |
| | | 2. Սուլթան Պէյագիտ, Թրամվէյի կայարանին դէմ, Թ. 13. |
| ՍԵՐԻՏԱՐ | | Չարլը Պօյու, Թ. 120. |

Դասերը եւ նորոգութիւնք՝

Կասաբեալ երաշխաւորութիւն։

Մասնաճիւղեր գաւառաց բոլոր քաղաքներուն մէջ։

Սինկէրի Ընկերութեան կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, Թ. 343 եւ 343 կրկին, Սարգիս Պէյ Տիւզզուլուի տունը։

ՄԱՆԿԱՆՑ ՍԻՐԵԼԻՆ

Եթե երախայ մը նիհար է և չի գաւալիր նե, անորժակ չունի և կերածը կատարեալ չի մարսեր նե, և ակուայները — որոնք չեն մեծնարկոր նե — ոչ բնականապէս միւս աղետները կ'աւելցընէ թող իրեն տրուի:



SCOTT'S EMULSION.

Ասիկայ մանկանց համար անորժեյի կերակուր և դէպ մըն է, և երախայն զայն խմած ատեն վերջի աստիճանի ուրախութեան մէջ կ'ըլլայ: Սայրը շուտմը կը տեսնէ թե ինչպէս երախային բոլոր վիշտերը անմիջապէս կը դադրին, որպէս թէ նոր արիուն և նոր կեանք բոլոր անկարգութիւնները չնչելով մանկան արտերը առողջութեան և զուարդութեան փոխարեցին: Երախայն միշտ պատրաստ է այս նոր (ուսելիք և) բնականին և անորժակով կրնալ: Արական գաւալել և պղտիկ ձերմակ ակուայները առանձնաւի և վիշտերու կ'ըսկան երեան ելլել: Ըսգօթի Բաղադրութիւնը երախայից առողջարար գիրութիւնն և գաւալում կուտայ, մարսողութեան կ'օգնէ և մարմնոյ ընդհանուր զօրութիւնն կը պատճառէ:

ԸՄԿՕԹԻ ԲԵՂԼԹՐՈՒԹԻՈՒՆ

բոլոր տղայոց Սիրելին է և զանոնք շուտմը վարդազոյն երեզլթի և զօրաւոր և կատարեալ առողջութեան պատկերներու կը փախէ: Ըսգօթի Բաղադրութիւնն վրան այս նշանով վարդազոյն փաթեթի մէջ ծալուած շիշերէն կը ձանչցուի:

Հիշերու վրայ ասոր ուշադրութիւնն ընել պէտք է:

Բոլոր բեղաւորները և բեղաւորները կը ծախեն:

ՏՕՔ. Ն. ՏԱՂԱՒԱՐԵԱՆԻ ԳՈՐԾԵՐԸ

	դր.
Գիտական շարժում Բ. տարի (1886)	20
» » » Գ. » (1887)	20
Բնական Պատմութիւն Ա. հատոր (Կեդ. Հիւսուածաբանութիւն եւ Մարդկային Կազմախօսութիւն ու Բնախօսութ. Դասագիրք երկրորդական վարժարանաց	40
Նախորդին համառօտը. Դասագիրք՝ Նախաբերքայնաց	8
Մագումն հայ տառից (Պատկեալ Իզմիրեանց մրցանակաւ)	10
Մանրէաբանութիւն	10
Տիեզերք եւ իւր կազմութիւնը (Ֆրանսերէն)	10
Առողջապահութիւն	25
Մանրական Գործարանք (Կազմախօսութիւն, Բնախօսութիւն եւ Առողջապահութիւն	6
Մարդկային Առողջախօսութիւն	5

Բառացոյցով Ախառն անց Բ. Տիպ. 3
Տարուինականութիւն, Գ. Տիպ. 3

Կեդրոնացեալին է

Մատենոսեան Տպարան, Ֆինանսըսը, Կ. Պոլիս

ՋՄՐԱՆ ԱՌԹԻԻ

Գնեցէք Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ ԵՒ Յ. ԻՍԱ. ԳՈՒԼԵԱՆԻ՝ Ջինաստանէն, Հնդկաստանէն, Ճաւայէն եւ Սէյլանէն ուղղակի բերել տուած քարմ, հոսաւեք եւ առողջարար թէյերէն, որոնք ձերան եղանակին յարմարագոյն ըմպելիներն:

Միշտ ուշադրութիւն մեր վաճառանիչին:

Կ. Պոլիս, Պահճէ Դափու, Ճէլալ պէյ խան, Թիւ/10:

Մասնաճիւղեր Թուրքիոյ գլխաւոր քաղաքներուն մէջ, նոյնպէս Եգիպտոս:



ՄԱՍԻՍ

54^{րդ} ՏԱՐԻ, Ե. ՇՐՋԱՆ




ԹԻԻ I



3 ՅՈՒՆՈՒԱՐ 1904

ԿԵԱՆՔԻ ԴՐՈՒԱԳՆԵՐ

ՅԱԿՈԲԻԿ



Ս.

Երաժշտութեան եղանակներ կան, տարիներէ ի վեր մուցաւած, որոնք յանկարծ միտքդ կիյնան: Եղանակներ՝ զորս անօգուտ ջանքեր ընելէ ետքը մտքէդ վանելու ու հեռացնելու համար, մէկէն ի մէկ բարձրաձայն երգելու կ'ելլես: Իմ Յակոբիկը յիշելու ելլելիս այդ տեսակ բան մըն է: Խնչպէս, մտքի ինչ անգիտակից ջանքով յիշողութեանս առջեւ եկաւ կանգնեցաւ այս աղուն դէմքը. չի պիտի կրնամ բացատրել. սա գիտեմ միայն որ ութը օրէ ի վեր, վայրկեան մը աչքիս առջեւն չեմ կրնար վտարել զայն:

Դպրոցին մէջ նախ կը տեսնեմ զինքը ճիշդ իմ քովս նստած, զմելիովը դրասեղանին վրայ իր անունը քանդակելու կամ շատ անգամ ալ պարզապէս զայն տաշելու զրադած, իր սիրական զբաղումը. յետոյ, դպրոցէն ելլելունու, իրարմէ բաժնուհեղուս վերջը, հոս ու հոն, միշտ ալ ուր հագուած երկտասարդ ուրուն կենցաղասէր մարդու համբաւը, յարափոփոխ սէրերուն պատմութիւնը ամէնուն բերանն էր: Աւելի հեռուն՝ երեսունին մօտերը՝ միեւնոյն մարդը, յոգնած քիչ մը սակայն, և դրամական անձկութենէն՝ արդու դարդի ծախքերուն հետ իրաւախօսութեան զաւուստիւած: Ու քիչ մը վերջն ալ ըտլորովին չքաւորութեան մէջ ինկած, իսուերթափած ուրախիկով մը կ'անակը որուն մաշուած կողմերը չի ցուցնելու համար իր ջանքերը կը նշմարեմ: Յետոյ աներեւութացումը, ծովին մէջ սուզող լուզողիկն պէս որ իր դոյութենէն նշան չի տար, և չսպասուած վայրկեանին վերերեւումը, ամուսնութեան մը

չնորհիւ, անհնարին ամուսնութիւն մը այս աղուն համար, ուսած աիկի պէս բան մը որ ծովին յատակը մնացած նաւը ջուրին երեսը կը հանէ:

Եւ շատ չափած լայն, սեւ շրջանակով պարուրուած թուղթը, վրան՝ ծունկ չոքած անշնորհ հրեշտակով մը որ անոր մահը եկաւ օր մը ինծի ծանուցանել: Ուրիշ ոչինչ:

Մասնաւոր պատճառ մը որոնելու չելայ ասոր համար. հիւնդցեր ու մեռեր էր Յակոբիկ որ սիրուն աղայ մը ըլլալուն համար մահկանացու ըլլալէ դադարած չէր ու թերեւ ճիշդ ասոր համար ուրիշ մը աւելի մահկանացու ըլլալու էր:

Հիմայ սակայն կը վերակազմեմ այս կեանքը: Օդաչու դնացք մը քան թէ տոտիկ տօտիկ քալել մը հաստատ հողի մը վրայ: Բնդհանուրէն տարբեր ապրիլ մը՝ ընդհանուրէն տարբեր մեռնելով մը իր թողութիւնը գտած: Ութ օրուան մէջ իր վրայ հաւաքած պղտիկ պատմութիւններէս, ջնջին դէպքերէս առաջնորդուած՝ քայլ աւ քայլ կը հետեւիմ իրեն: Այս կեանքին բոլոր յորինուածքները կը քայքայեմ մէկիկ մէկիկ, ջիղերը կը զննեմ, երանքները կը բանամ ու, ինչ որ անհնար կը թուի ձեզի, իր հողին կը գտնեմ ու կը վերլուծեմ: Տեսակ մը յետադարձիկ վերահասութիւն անդոյին որ զիս կը հետաքրքրէ, կեանքի ու մահուան հարց՝ իրարու խառնուած որ քուն չի քնացներ ինծի մինչև որ լուծուիմ չի գտնամ ու ճիշդ եղբակացութեան մը չի հասնիմ՝ Խիտուր, ամէն ճշդութեանց պէս:

Ի

Հայր ու մայր չունէր անկիայ, այլ ծերունի

մեծ հայր մը, Ակէն եկած կարծեմ ու հացագործութեամբ հարստացած, որ մինչև վերջը վրան գորգորաց և որուն մէջ հատիկն էր: Այս երկու անչափահասութիւնները, մին՝ տարիքի անբաւականութենէն յառաջ եկած՝ Յակոբիկինը, միւսը՝ տարիքին սահմանազանցութենէն բխած՝ իր հաւինը, զիրար գտեր ու հասկցեր էին միշտ: Իրենց Պէշիքթաշի տանը մէջ՝ քսան սենեակով, ընդարձակ պարտէզով տուն մը՝ մերկնին դրացի, միս մինակ երկուքն էին: Հոն ամէն յան իրմէ կախում ունէր միայն, իր մանկական դատաստանէն: Եթէ իրաւ է որ զբօսանքը չօայլուելով կը դադրի զբօսանք ըլլալէ, Յակոբիկ իր տղայութեան ատենէն ճանչցաւ Զանճոյթը, յագորդէ եկող Զանճոյթ, աշխարհիկ յաջողութիւնները արհամարհելու մերձաւոր: Իր տարիքին յատուկ խաղերը շատոնց վայելած ու մէկդի նետած էր կտորած խաղալիկներու պէս, երբ մենք ամէն մէկս ասոնց մէջ գերադոյն երջանկութիւնը կը տեսնէինք:

Յակոբիկ անոր համար միայն վարժարան եկաւ, որովհետեւ սովորութիւն մըն էր ասիկայ և որովհետեւ տունը մինակ մնալով սիրտը պիտի նեղանար:

Աչքիս առջեւն է իր նիհար բայց ազնուորիկ դէմքը լուսնկայի կլորութիւնով ու բերնին թուշին ճակատին գրեթէ կնոջական գիծերը այնքան նուրբ, այնքան վախճուկ: Խարտեաչ մազերը միշտ սանդղած ու երկուքի բաժնուած գլխուն վրայ: Հիւանդագին շնորհ մը վրան սիւսուած որ պահպանութեան կոչում մըն էր կարծես: Տանը-չորս տարու էր այդ միջոցին: Անհնարին ծուլութիւնով ծոյլ մը սակայն իր դասերուն մէջ: Բայց ի դժագրութենէն, որուն մէջ նորէն զարաւելի կերպով՝ բայց իրական ձիրքով օժտուած էր, յետինն էր ամէն ուսումներուն մէջ: Ծաղրանկարի վարպետ մը միայն, տընտեսէն սկսելով մինչև անօրէնը, իրենց պատկերները ազանով էին դնելու պատերուն վրայ մատիտով, երբեմն ալ անուրի մը ծայրով գծուած: Հարուստի զաւակ ըլլալուն՝ իր յանցանքները, քրէական մեզ ամէնուս համար, ներողամիտ խրատներէ ուրիշ հետեւութիւն մը ունեցած չէին:

Իր վտիտ կազմին հակառակ՝ ճապուկ ու ճկուն տղայ մըն էր, պարագլուխը մեր ամէն անկարգութեանցը ու մեր տղայական ըմբոստութիւններուն: Ինչպէ՞ս կուզէք որ սանկ տղայ մը չի սիրուեր մենէ: Օրերով բացակայ կը մնար դպրոցէն, այդ միջոցին նոր զբօսանքի մը, երբեմն նոր մարզանքի մը հետամուտ էր և որուն մէջ խփոյն գերազանց կը հանդիսանար: Մասնաւորապէս կը յիշեմ կիրակի օր մը երբ Օխլամուրի կողմը հանդիպեցայ իրեն. ձի հեծեր էր, ամենի նժոյգ մը զոր պչրող ամաղոնի մը պէս խաղցնելով կը վարէր: Աղջիկները խենդ ըլլալու էին իրեն համար. այդ օրը նախանձեցայ իր վրան: Ատեն մըն ալ որսորդութեան սէր տուաւ. իր հագուստը կապուստը, ղէն ու զարդը, պատմած պատմութիւնները ամէնուս բերնին ջուրերը վազցուցին:

Այս լիաբուռն վայելքը կեանքին, որ շնորհուած էր իրեն մեր ցաւատանջ դպրոցականութեան ճիշդ դէմը, դառնութիւն մը չի դրաւ երբեք մեր ներսը, այնքան կը վայելէր իրեն անիկայ, այնքան շնորհալի կ'ըլլար ատով:

Կը հաւատամ որ շատ մը բաներու մէջ վայելցնելը՝ մեծ ու դույզ ճշմարիտ Արդարացումն է:

Վարժարանի կեանքէն վերջը կորսնցուցի զինքը. ևս նոր ուսանողութեան շրջանի մը մէջ նետուեցայ, անիկա բուն կեանքին մէջ թեւակոխեց խփոյն:

Պատանութենէն իր մուտքը երիտասարդութեան մէջ՝ շքեղ եղաւ: Ծերունի հաւը մեռեր էր մեծ հարստութիւն մը ձգելով իրեն, պատրաստ դրամէ, կարգ մը կալուածներէ ու շատ մըն ալ առնելիքներէ բաղկացած: Ուրիշ մը իր տեղը՝ այս ժառանգութիւնը հաշուելու, ժողովելու, կարգի բերելու պիտի նայէր: Ասանկ յիմարութիւն մը չանցուց մտքէն բնաւ: Ունեցածը ծայրէն սկսաւ վատնել. նախ պատրաստ դրամը, յետոյ կալուածները մի առ մի ծախելով. առնելիքները ձգեց պարտականներուն ու չի վնասեց զանոնք, նոյնիսկ երբոր աղքատացաւ: Պէշիքթաշ իր մեծ հօր տունը

բնակեցաւ միշտ, նախապաշարուած ըսէ կամ յարգանք անոր յիշատակին: Գիշեր չեղաւ որ Բերա չերթար, հաճոյքի զքօսանքի արուարձանը, նոր տարփուհիներու ետեւէն: Բայց իր փնայումին ու զեղխութեանցը մէջ անգամ միշտ ուրոյնութիւն մը ունէր, վէս' ու տոհմիկ բան մը, ինչ որ, եթէ ուշադրութիւն ըրած էք երբեք, մեր գաւառացիներու ընդհանրապէս գծուած զաւակներուն մէջէն՝ Ակէն եկող սերունդին վրայ միայն կը նշմարուի:

Պ.

Ու այս բոլորին մէջ ատեն գտաւ ճշմարիտ, մաքուր ու ազնիւ սէր մըն ալ ունենալու իր սրտին մէջ. վասն զի աղէկ գիտեմ որ մեր զեղէն աղջիկ մը սիրեց ու սիրուեցաւ անկէ: Էնաթ ընտանիքի աղջիկ, պարզուկ ու անբիծ սիրտ որ անոր նուաճող էրիկ մարդու մէկ նայուածքին առջեւ ակարացաւ: Դեղինի վրայ, աղուոր առատ մաշեր ու գշտոյի հասակ մը ունէր, խրոխտ գեղեցկութիւն որ ամէն երանութեանց պէս Յակոբիկին բամբինը եղաւ: Բոլոր արտաւարակ հաճոյքներու մէջ այս աղջիկը՝ անհպելի սրբութեան մը պէս իր սրտին առանձին մէկ անկիւնը պահեց միշտ: Իր խօսական արշաւին ու յետոյ վերջնական քայքայումին մէջ այս սէրը անխախտ իր տեղը մնաց:

Այսպէս անցաւ իր երիտասարդութիւնը, անդու վաղք մը: Այն օրը միայն որ ա'լ դրամ չի գտաւ վառնելու, կանգ առաւ առանց դարմանքի, մանաւանդ առանց տըրտունջի: Երսունին մօտ էր հիմայ, նորէն վաշելազեղ երիտասարդ՝ պահելով վրան ան նրբութիւնը ու շնորհը որ առնական կորովին հակընդդէմ է քիչ մը և ուրկէ սակայն այնքան կ'ախորժին կարգ մը կիներ:

Ուրիշ մը իր տեղը պարտք պիտի ընէր շարունակելու համար իր ապրելու եղանակը. ատանկ բան մը չըրաւ. ըսի որ կեցաւ խաղոյն ու իր մեծ հօրը տանը մէջ փակուեցաւ, աներեւոյթ եղաւ գրեթէ:

Ատենին նահանջելը՝ ամէն բանի մէջ ճարտարութեանէ աւելի բան մըն է. ընդհանրապէս ասիկայ կը պակսի անոնց որոնք յաջողութեամբ լեցուն կեանք մը վարած են:

Յետոյ, ստիպուած, այդ տունն ալ ծա-

խեց. իր առաջին վիշտը եղաւ ասիկայ բովանդակ կեանքին մէջ. ատկէ վերջը անդաստական մէկը եղաւ ա'լ. զինքը շրջապատող համակրութիւնը, իրեն ընկերացող ծափահարութիւնները հետզհետէ հեռացան իրմէ ու տակաւ պակսեցան մարդ արձագանգի մը նման. իր երեսին մպտող բոլոր երեսները թթուեցան ու անդին դարձան: Անհրաժեշտ բարեւները անգամ պղտիկցան, տարտամ, խուսափողական ձեւեր առին՝ իր բալթօին գոյնին պէս: Այս ընդհանուր սառնութիւնը զինքը շփոթեցուց քիչ մը ու ամէն արիւթ թիւն մեւցուց իր մէջը: Ընդհանուր լքումին մէջ՝ ձեռք մը միայն կարկառեցաւ իրեն, իր սիրած աղջկան ձեռքը: Բայց հիմայ իր անկումին մէջ՝ ինքզինքը անարժան զգաց անոր ու խոյս տուաւ անկէ:

Հոս հոն շրջեցաւ, զեռ նոր ոտք դնելով միւս կեանքին սեմէն ներս, դժնդակ ու իրական կեանքին:

Որչափ ատեն աղքատ ապրեցաւ, պատեբու տակէն սպրդելով քալեց, զրկանքներու անագին աշխարհքին մէջ թափառեցաւ:

Այդ միջոցին էր կարծեմ որ պատահեցայ իրեն ու կեցուցի զինքը փողոցին մէջ.

— Տեսնենք, հարցուցի իրեն, ինչո՞վ կըղբաղիս հիմայ:

— Մեռնելով, պատասխանեց ինծի:

Պ.

Շարաթ մը վերջը իր ամուսնութեան լուրը առի: Տունը մնացած, ստակի տէր, անհրապոյր աղջիկ մը՝ երիտասարդ էրիկ մը փնտռելու ելեր էր ու Յակոբիկը համոզեր էին որ այս պաշտօնը ստանձնէ:

Առանց ընդդիմութեան, առանց խորհրդածելու հետեւեր էր իրեն տրուած խրատին, հիւանդի մը պէս որ ամէն կաթ կորսնցուցած՝ յանձն կ'առնէ ամէնէն գառնահամ գեղը խմել: Ու օրին մէկը տուն—փեսայ գացիր էր Բանկալթի, փայտաչէն, հին օրերէ մնացած տուն մը, Պետրոսեաններուն տունը, առանց աղէկ մը գիտնալու թէ ի'նչ ընելու համար:

Կարգի կանոնի մարդիկ էին հոն եղողները, հարսին հօրմէն մօրմէն սկսելով մինչև տան ծառաները. առտուն երեքին սեղանատունը

նախաճաշ . վեցին՝ ցորեկուան ճաշը . իրիկուան դէմ՝ աներհայր ու զոքանչ հինգ բառթի պէզլիկ իրարու հետ . իր կինը՝ դէմը անկիւն մը նստած , դրացի տուներուն մէջ պատահած եղելութիւնները մանրամասն պատմելով :

Ամէնուն դէմքին վրայ լուրջ ու հանդիսաւոր բան մը կար որուն մէջ նոր փեսան իր անառակ տղու անցեալին դէմ լուռ կըլտամբանք մը կը կարդար :

Իսկ կիրակի օրերը եկեղեցի պիտի երթային անխաբան : Յակոբիկ ընդդիմութիւն չըրաւ այս ամէնուն , այնքան նոր , այնքան անհնարին , այնքան անխմատ էր իրեն այս ամէնը : Իր կինը , զուրկ ամէն պըրանքէ , կարծես քրիստոնէական պարտականութիւն մը կատարելու համար կը մօտենար իրեն ու պարզապէս զղուանք կ'ազդէր անոր : Իրենց յարաբերութիւնները անհրաժեշտէն անդին չանցան :

Ամէն անհատականութիւն կորսնցուցած՝ Յակոբիկ ինքզինքը վերստին գտնելու ջանք մը չըրաւ , գիշեր մը միշակ դուրս ելլել մտքէն անգամ չանցուց ,

Այխարհի առջեւ սակայն՝ Յակոբիկ նոր բազդի մը տիրացեր էր Պետրոսեաններուն փեսայ ըլլալովը . բարեւները սկսեր էին նորէն արուիլ : Աները ըրաւ չըրաւ դործի դրաւ զինքը իր կնոջ ազգականներէն մէկուն քով , որուն կալուածներուն հասոյթը պիտի հաւաքէր ու վարձու պայմանագիրները պիտի նորոգէր . բաւական ատեն կանոնաւոր ու գոհացուցիչ կերպով վարեց իր նոր փեսի ու գործակատարի դերը :

Եկեղեցի յաճախելը տեսնելով՝ քանի մը հոգի առաջարկեցին Յակոբիկը թաղական ընել :

Խելքը գլուխը եկաւ , կ'ըսէին շատերը : Հանգստութիւնը ու երջանկութիւնը հիմայ գտաւ , ըսին ամէն տեղ : Աներհօրը հարստութիւնը ուշ կամ կանուխ իրն էր և իրազեկ անձեր տասը հազար ոսկիի մօտ կը հաշուէին այդ հարստութիւնը : Նախանձողներ ունեցաւ :

Թաքսիմ , պարտէզին մօտ բռնեցի զինքը .

— Ի՞նչ ըրիր , Յակոբիկ :

— Ինչ որ ըսեր էի քեզի արդէն , մեռայ :

— Ի՞նչ կատակասէր մարդ ես :

Տրտում ժպիտ մը գծագրուեցաւ ու անհետացաւ իսկոյն երեսին վրայ :

— Ճաշի ատեն է , պատասխանեց ինծի , պէտք է որ տունը ըլլամ :

Հեռացաւ փութկոտ քայլերով , առանց զիս ողջունելու :

17.

Ու մեռաւ իրօք , չտխաւոր հիւանդութիւնէ մը վերջը , ոչ շատ երկար՝ ոչ շատ կարճ , կարգով կանոնով , ինչպէս որ պատուաւոր մարդ մը պէտք է որ մննի : Ոչ յանկարծակի , ոչ զխղուածական մահով , որոնք զղջումի ատեն չեն ձգեր ու դերագոյն պատրաստութեանց չեն յարմարիր , այլ երեք ամիս անկողին ծառայելէ վերջը ու Ս. Եկեղեցւոյ խորհուրդները առնելէ զինք , ինչպէս Մահազըր ծանուց :

Բժիշկները , որոնք զինքը դարմանելու եկան , ճշգիւ չի կրցան ճանչնալ հիւանդութիւնը որ զինքը սպառեց . նուազում մըն էր տակաւ , անխօսիկ , առանց ցաւի , որ այս չէնքով ու շնորհքով լեցուն տանը մէջ միակ ներելին էր արդէն :

Անոր մեռնելովը ոչ ոք ցաւ մը զգաց . թէեւ միշտ միեւնոյն Մահազըր մեղ իմացուց թէ այս կորուստը ի խոր սուգ համակեց անեղիները :

Իր այրին տարի մը սեւեր հագաւ , առջի երեք ամիսը թանձր քօղք մը դրած երեսն ի վար , որ մինչև ոտքը կը հասնէր . յետոյ քօղքը կոնակին վրայ իջաւ ու քիչ քիչ վերցաւ բոլորովին . ընդունուած սովորութիւնները ամէնքն ալ յարգուեցան ու պահպանուեցան : Նոյն իսկ քառսունքին , Յակոբիկին հոգուն պատարագ մը ընել տուին :

Այսպէս զլսիվայր բան մը եղաւ այս տղուն ճակատագիրը : Ծիշդ անկէ մեռաւ ուրկէ շատ մը մարդիկ այնքան հանգիստ կ'ապրին աչընուս առջեւ : Յաւը որ զինքը տարաւ , բորոտութիւնն էր՝ տարածուած այնքան մեր մէջ և որուն իր առողջ նկարագիրը չի տոկաց : Այդ հիւանդութիւնը կը կոչուի՝ պայմանադրական կեղծիքը ընկերութեան :

Գ. ԶՕՀՐԱՍՊ

ԱՄԱՆՈՐԻ ԱՌԹԻԻ

(Մհ, տալիակութիւնը Ամանորի յօդուածն երբեք... :

Անպատճառ չաբաթ իրիկուընէ չաբաթ իրիկուն միայն ածիւրուող չուկայի մարդոց պէս, քրոնիկագիր մը դատապարտուած է տարեմուտին քանի մը էջ մրտուել, ըսելու համար հոն բաներ մը որոնց միւսնոյնը իրմէ առաջ հազար հոգիներ ըսած են և հազար հոգիներ պիտի ըսեն իրմէ ետքն ալ :

Thèseը միւսնոյնն է, varianteները կը փոխուին միայն, ուրիշ ոչինչ :

Փիլիսոփայ եղիր կամ զաւեշտագիր, յուսեալ կամ լաւատես, ծեր կամ երիտասարդ, ուղեւ չուղեւ ժանգոտած մզլած, ratatiné բառեր, անբարեկամութիւններ պիտի գործածես լպրտելու համար յօդուածդ որուն վերնագիրը միայն բաւական է... չի կարգացուելու համար :

Ընթերցողը քեզմէ առաջ գիտէ թէ ի՞նչ ապուշ բաներ պիտի ըսես հոն :

Նախ ժամանակին վրայ պիտի խօսիս — և շատ խելացի պիտի համարուիս եթէ «թեւաւոր անիւ»-ի մը չնմանցնես զայն. — կեանքի դառնութիւնները մէջտեղ պիտի դնես, ժամանակը սուղ է, պիտի առարկես, իբրեւ թէ Բիկմալիոնին քով ծախուած ապրանք մը ըլլալը այդ, յոյսի վրայ պիտի խօսիս, երջանկութիւն պիտի մաղթես, և լաւագոյն ըլլալու պէտքը, հաւատք ունենալու աղուորութիւնը ընթերցողներուդ խրատելէ ետքը, պիտի ստորագրես յօդուածդ զոր հրատարակիչը անպատճառ պզտիկ զեղչով մը կը վճարէ... խոստանալով մնացեալը կարգադրել տարեգլխի գանձումներէ անմիջապէս ետքը : Եւ այդ ուղուբսով դրութիւնը ճիշտ կազմեղին սկսած ըլլալուն համար՝ ստէպ մինչեւ Պօղոս-Պետրոս կը տեսէ... :

Երբ այդ corvéeին կոչուած եմ այսօր, կը մտածեմ թէ ի՞նչ կերպով կրնամ հաճելի ըլլալ ընթերցողներուս, ըսելով անոնց անանկ աղուոր բաներ որ ինձմէ առաջ ոչ ոք ըսած ըլլայ իրենց :

Դժուար բան, կը հասկնամ՝ ք, չէ :

Վարպետորդի մարդիկ կան, պատահականաբար մարգարէական ոգի մը ունեցող, որոնք խրտուկակի դերը ստանձնելու մէջ հաճոյք մը, փառք մը գտնելուն համար, դեկտեմբերի 15էն քանի մը օր վերջը յօդուածնին գրելու ձեռք կը դարնեն և խռպոտ ձայնով մը կ'ըսեն ձեզի... —

«Յառաջիկայ տարուան մէջ արեւի երեք խաւարումներ տեղի պիտի ունենան և լուսնի՝ երկուք. տեղատարափ անձրեւներ քանի մը քաղաքներ պիտի քչեն տանին, հունձքերը շատ գէշ պիտի ըլլան, Ամերիկայի մէջ համաճարակէմը 240,000 հոգի պիտի մեռնին, մեծ գործարանատէր մը պիտի անանկանայ, բամպակները որթ պիտի բռնեն, հոչակաւոր երգչուհի մը յանկարծամահ պիտի ըլլայ, հիւժախտը իր դարմանը չպիտի գտնէ, տարուան ընթացքին մէջ խիստ հաւանականաբար Այվադեան չորս յօդուած պիտի սայ առտուն ամէնէն շուտ արթնցող թերթի մը, սիքլոն մը պիտի չորցնէ Ատլանտեան ովկէանոսը, կեռասի ծաւերը պիտի չորնան, նարնջենիները ա'լ ծաղիկ չպիտի տան — և արդէն այս օրուան օրս այնքան քիչ պէտք ունինք այդ նշանական ծաղիկին —, գեղանին Օթթէրօ, կրպակը պիտի դոցէ, après fortune faite pendant toute une vie de nocces» և ասոնց պէս շատ մը աղուոր բաներ որոնց ընթերցումը սաղբա՞քը կուտան քեզի եօթը կրամ սթրիքնին առնելու... :

Կաղանդը սակայն ատանկ տեղը բաներ լսելու համար սահմանուած թուական մը չէ :

Ծաղիկի և ժպիտի, ցնծութեան և հրճուանքի, դորովի և սիրոյ, գրկախառնութեան և համբոյրի, ներքին գոհացումի և արտաքին փայլի այդ օրը թունաւորելու չեն անոնք, որ սեւ ակնոցով կը նային կեանքին, ժամանակէն կը վախնան և ինքզինքնուն վրայ հաւատք չունին :

Կեանքը անուշ է և ռալիլը համով առնո՞նց համար միայն որոնց խիղճը խայթ չուհի, սիրտը տենդ և միտքը մոլորում :

Գէշ ապրիլը՝ ճակատագիրն է մարդկութեան. խելացութիւնը՝ աղէկ ապրիլ գիտ-

նալուն մէջն է և ասոր համար մօայլ գաղափարները, տխուր ենթադրութիւնները, դեղին կասկածները պէտք չէ չփոթեն մեր միտքը, գրաւեն սիրտը և վնասեցնեն հոգին :

Սիրել իր ընկերը, սիրել իր դրացին— երբ մանաւանդ ախորժաքեր կըրորութիւններ ունեցող կին մըն է ան— ներել ուրիշներու յանցանքներուն, օգնել իր նմանին, բարի ըլլալ ամենուն համար, օգտակար իր համայնքին, ահա զլիստոր սկզբունքները երջանիկ ապրելու արուեստին :

Օրացոյցի և ժամացոյցի գերիներս՝ մենք՝ լայն սիրտով, ժպտուն շրթներով, աննկեղ նայուածքով ողջունելու ենք նոր տարին որ ժամանակի հօլովման մէկ աննշան փուլն է, որ ուրիշ բանի չի ծառայեր բայց եթէ մօտեցնելու թուականը տանդ վարձքին, դերձակին պարտքիդ և լրագրի ցրտի չին տալիք ընծայիդ :

Ժամանակը՝ այդ խորհրդաւոր, անբացատրելի, անիմանալի, վիթխարի ոյժը, միակը՝ որ գերիվեր է ամէն ոյժերէ, ամէն կարողութիւններէ, ամէն զօրութիւններէ, լաւատես հայեացքի մը առջև ոչինչ ունի վախճալիք : Փիլիսոփաներն են որ մեծ կարեւորութիւն կուտան անոր և առջին կը սքլին :

Ժամանակը... իրաւ այդքան ահաբեկող բան մը ունի իւր մէջ : Ես չեմ կարծեր :

Բոլոր իմաստունները աշխարհիս,—Ս. Անդեղեղան ալ մէկտեղ—հին ատենուան մոգերը, Չամուրճի պատուելին, Ռընան, իրենց ժամանակին, բոլոր մտքի վարպետները ի մի բան, մեծ կարեւորութիւն, անեզր համեմատութիւններ և տեսակ մը անբացատրելի աստուածութիւն տուին ժամանակին, շուտ կացին անորմէ, ահաբեկեցան, անոր ամէն արարողութիւնը սաղմոսերգեցին, և պատուիրեցին մեղի անոր յարգը դիտնալ, անպէտ տեղը չի վառնել զայն և անոր յիշատակը չի մոռնալու համար մէյմէկ նիքէլ ժամացոյց դրին զրպաննիս :

Կին մը գտնուեցաւ սակայն, միակը իր տեսակին մէջ, որ ժամանակը ըսուած անշուշտիւրի բանին քթին խնդաց, անոր դիմակը վար առաւ, ասպարէզ կարգաց անոր և

Աւիուսթա Հոլմէսի պէս յաղթանդամ, դէմը կանգնեցաւ ըսելու համար անոր .

—Նա՛ հա՛, պարոն ժամանակ, երկայն ըրիր, հերիք է որքան պաշտօններ ունեցար, որքան աւերեցիր : Ես աշխարհ եկայ բեկանելու համար քու prestige-դ և ցուցունելու համար թէ երկուքնէս աւելի ուժաւորը ապահովապէս դուն չես : Ի՜նչ է վերջապէս քու գործդ, թօշնեց՝ ել ինչ որ թարմ է, երիտասարդը ծեր ընել և կոյսը այրի : Այս ամէնը շատ կարեւորութիւն չունին և շատ ալ չեն հետաքրքրեր դիս : Յետոյ, իմ գիտնալիք բանս չէ և քսակիս ալ չի դըպչիր : Բայց բան մը կայ ուր պիտի ցուցանեմ թէ ես քեզմէ՝ աւելի զօրաւոր եմ, աւելի բարի, աւելի մարդասէր : Եթէ կուզես, բացէ ի բաց խօսինք, mon vieux : Գիտե՛ս, ամէնէն շատ ո՞ր բանը ջիղերուս դպած է, բան մը զոր չեմ ներեր քեզի և այսուհետեւ կարգիլեմ որ ընես : Բաւական չէ որ կը թափես մարդոց ակռաները, սիրահարնուն սպասող աղջիկներուն սիրտը, կը թափես նաեւ մարդոյ և կիներուն մազերը : Այսքան ալ անգթութիւն, ça, non, par exemple ! Հո՛ւ կեցիր այլ ևս : Աղուոր, դեռ մանկատի, սիրել գիացող կիներուն մազերը կը թափես, հէ՞, չար տղայ : Ես այդ բանը չեմ ուզեր, հա՛ : Թափէ՛ եթէ կուզես, բայց ես պիտի բուսցունեմ դանոնք, քու ճաղատը՝ բաժ գլուխներդ՝ par terreներու պիտի վերածեմ : A nous deux maintenant !

Ժամանակը լռեց և... Միսս Ալլէն (Mrs Allen) իր Règénérateur-ը մէջտեղ դրաւ :

Մաղերու վերծնութեան թուականն էր այդ, որու հանդէպ ժամանակը յաղթուեցաւ և Միսս Ալլէն հինգ ու կէս միլիօն տօլար ներս նետեց :

Այս միջադէպէն ետքը, ա՛լ հուռաւ որ նեցիր ժամանակի ամենակարողութեան վերայ. եթէ կրնաս և եթէ երբեք տիրացու չես ծնած :

Ժամանակը, տարին, փոքրոգիները կը վնասեցնեն միայն : Խելացութիւնը անոր յաղթել գիտնալուն մէջ կը կայանայ : Խնդիր չէ թէ հակառակ քու շարլաթանութեանդ՝

գլուխները միշտ ճաղատ մնան նորէն, բաւական է որ դօտիդ կապես Միսս Ալէնի պէս և չի քակես զայն Մարիոն տը Լօրմի նման:

Պիտի ըսէք թէ ամէն մարդ ուղած յաջողութիւնը չի կրնար գտնել: Ես չեմ որ հակառակը պիտի պնդէի:

Իրաւունք ունիք, տեսէք, ես օրինակի համար, փոխանակ այսօր ապուշի պէս ասանկ տափակ յօդուած մը գրելու դատապարտուած ըլլալով՝ պիտի նախընտրէի կարող ըլլալ ձեռք անցընել կրակի դոյն սնդուսով capitoné écrin մը և մէջը հանգչեցնել աղամանդէ և մարդրիտէ հիւսուած revière մը 400,000 ֆրանք արժողութեամբ և զրկել զայն սիրականիս, երկու բառ ալ միասին

A toi et à ce soir.

Եւ այդ դոհարին փոխարէն սրտանց տրուած պաշիկ մը՝ դոհ պիտի թողուր զիս:

Բայց աւա՜ղ, հակառակ ամէն բան իրեն ներելուս, ժամանակս ինծի չի ներեր:

Յօդուածս լմնցաւ և վախճածիս չափ՝ այնքան տափակ եղաւ որքան կարելի է երեւակայել:

Ամէն ատեն ըսուած, կրկնուած մաշուած բաներ: Ոչինչ նոր իր մէջը: Ամէնուն գրածին պէս է աս ալ:

Ներողութիւն սակայն. ասիկայ միւսներէն սա տարբերութիւնը ունի որ, ընդհանրապէս Ամանորի առթիւ գրուած յօդուածները, յունուարի վերջին կը վճարուին, մինչդեռ այս յօդուածիս փոխարէնը դեկտեմբեր 10ին գտնւած եմ արդէն, dont acte:

ՎԵՐԶԱՆՈՒՄ

ԲՈՒՍԱՓՈՒԿ ՍԵՐ

Սիւրս մը տեսայ, սիւրս մը անմեղ ու մաքուր, Ռուս վրայ կաթիլ մը սէր կը դողաւ, Բնդիւս քայլով փոքր գացի դողահաւ, Անփորձ հոգւոյս մէջն ըզգայով սէր մը հուր:

Շուկ մը տափուկ՝ արբեայ սիւրս կըրակեմ՝ Փայփայանքով ուզեցի տալ սրբիկին. Շուկնքս եղաւ հով մը աւա՜ղ տաս ուժգին. Ու սահեցաւ սերն ալ սրբիք վըրայէն:

Յ.

ԱՊՍԲԻՆԱՐԱՆԻՆ ԱՐՁԱԳԱՆԳԸ

Անակընկալ միջադէպ ըսուածը ամէն առթիւ կրնայ հանդպիլ եղեր, և յօդուածագիրն ալ այս կանոնէն դերծ չէ, որուն ապացոյց՝ անցեալ օր թիւնէլին մէջ Մասիսի ընթերցողի մը հետ հանդիպումս:

Անկեղծ եռանդով ձեռքս ուժգին սեղմելէն յետոյ,

— Գրածիդ հաւնեցայ, ըսաւ, բայց այդքու նիւթդ չէ...

— Ի՞նչ նիւթ... ո՞ր նիւթը, հարցուցի շուարած:

— Ապաքինարանը, յարեց միամտօրէն. դուն որ լատաակերտերուն վրայ շարունակ բաց օդին վարժուած մարդ, ի՞նչ գործ ունիս հիւանդանոցներու ապականեալ օդին մէջ: Միքրոպ, կրէոզոք — կրողս տանի — ի՞նչ գիտնամ. նամանաւանդ որ նկարագրածներդ մեր կեդրոնէն շատ հեռու տեղուանք են, ուր հիւանդը չի հասած, խեղճը արդէն կէս ճամբան կը մնայ: Ներքին համողումով մը կը ճառէր բարեկամս, այնպէս որ տարակուսելու սկսայ և ամօթէս հողին տակը պիտի անցնէի՝ եթէ արդէն հողին տակը չի գտնուէի: Բարեբախտաբար, պաշտօնեան դռնակները բանալու վրայ էր. իսկոյն դուրս նետուեցայ և երկայն շունչ մը առի՝ քանզի միջադէպը լմնցած էր:

Բայց, ինչպէս ամէն առակ բարոյական խրատով մը կը լմնայ, նոյնպէս ալ ամէն գրութիւն օգտակար վերջաւորութիւն մը ունենալու է: Այս կերպ յօդուած մը, գիտութեան յառաջդիմութեան աշխարհէն հասած երկայն հեռագրի մը տպաւորութիւնը պէտք չէ որ ողդէ. այլ պարունակելու է նաեւ ստէպ մաս մը մեր միջավայրին իրաց և եղելութեանց հետ առնչութիւն ունեցող, և կամ անոնց հեռուէն դալող և անցնող:

Իրաւացի է որ մարդկութեան ցեղին պահպանմանը հաճար ճշնող և գործող այս օտար հաստատութիւնները թերեւս մեր կեդրոնէն շատ հեռուն գտնուելուն պատճառաւ — ուր երթալու համար նախ և առաջ գրպանի հիւ-

ծախտէն զերծ ըլլալու է։—Մասիսի ընթերցողներէն ոմանց համար քիչ հետաքրքրաշարժ թուի այս իմ պարզած նիւթս։

—Ո՛չ այդքան. համայն աշխարհ այս կարեւոր խնդրով կը զբաղի և ամէն ջանք կը թափուին մարդկութեան ցեղը փրկելու և կանգ առնել տալու համար այն վտանգաւոր զառիւլայրին վրայ, որու վարէջքը ազէտալի է և անխուսափելի։ Ի՛նչ հարկ կայ հեռուները գեղերի, օրինակը մօտերնիս է։

Ուրախութեամբ կիմանանք որ գաւառները զմեզ կը կանխեն։ Տրապիզոնցի և հոն հաստատուած Տիար Մինասեանց որ իր բժշկական շրջանը Ֆրանսայի մէջ աւարտած է, վերջերս Մատրիարի բժշկական համաժողովին մասնակցելէն յետոյ, բաւական ժամանակ մը ևս Եւրոպիոյ կարեւոր կեդրոններուն մէջ գիտական պտոյտ մը ընելով, ապաքինարաններու խնդիրը մասնաւորապէս ուսումնասիրեր է։

Արդ, Տ. Մինասեանց, իր ծննդավայրին շրջակաները, որոնք լեռնոտ և անտառախիտ են, տեղագրական դիրքով և կլիմայով շատ յարմար տեսնալով, մտադիր է հոն ժողովրդական ապաքինարան մը հաստատելու։ Այս առաջին ապաքինարանն է որով հայ համայնքը պիտի պարծի։ Շիւութեան անունը ժողովրդական ըլլալովն ըսել չէ՛ որ նա զուրկ պիտի ըլլայ ամենանոր առողջապահական պայմաններէն և անդորրէն որոնք՝ ինչպէս յիշատակեցի՝ հիւանդին համար նախադոյն դարձաններն են։

Բարի օրինակը, ուստի, գաւառներէն կը մեկնի, մաղթենք որ շուտով Սև ծովու փոթորկալից ալիքները ճեղքելով Պօլիս հասնի, ուր կարծեմ պէտքը աւելի անհրաժեշտ և անմիջական է մեզի համար։

Ապաքինարանին խնդիրը իր ուրիշ չահեկան մասերն ալ ունի. քանի որ ուղղակի մեր Ազգ. Հիւանդանոցին կառուցման խնդրոյն հետ առնչութեան մէջ է։

Դեռ այս ամառ յաւելուածական թևի մը շինութեան խնդիրը ուժգին խլրտելով յուղուեցաւ, այնքա՛ն որ ցիցեր իսկ զարնուեցան. դժբախտաբար մեր դրացի քոյր Եկեղեցոյն հոգարարձութիւնը այն ժամանակ

դժուարացաւ մեզի շնորհելու—ո՛չ թէ ճրիարար—Հիւանդանոցին կից բանջարանոցին մէկ կտորը, ուր դարերէ ի վեր կ'աճին և կը բարգաւաճին հսկայ կանկառներու առնկեր, գլուխնին խրոխտ և ծանրաբեռնուած և անկողմնասէր ըլլալու համար չի մօռնանք Եւրոպիոյ նշանաւոր մառուլը որ ջրուա վայրերու մէջ հաճելով բնակիլ, ի հնուց անտի այդ տեղուանքին մենաշնորհը առած իւրացուցած է։

Ինչ որ է. խնդրոյն դալով, Յոյները ըսի, այս ամառ, դժուարացան տալու և դժուարինս խնդրեցին։

Արդ ուրախութեամբ կ'իմանանք որ կորդեան հանգոյցը քակուելու վրայ է և հողին սեփականատէրերուն մէջ համաձայնութիւն մը կաղմուեր է. Հողին խնդիրը լմնցածին պէս, շինութեան կարեւոր խնդիրները կը սկսին բողբոջ տալ։

Յաւելուածական թևին շինութեան շարժառիթը հիւանդներուն չափազանց խճողութիւն ու բաղմանալն է։ Արդ, չէ՞ միթէ կարելի, որ կարգ մը բաժանումներ, որպէս են յիմարանոցը, ապուշանոցը, բրբանոցը, վիրաբուժական և բժշկական կարգ մը հիւանդութեանց պատկանող մասերը, այժմեան հողին վրայ թողնելով, Հողաբարձութեան յարգելի անդամները, իրենց ուսումնասիրութեան տարբեր ուղղութիւն մը տալով, հեռանան այդ տեղուանքներէն, ուր երկու մեծ հիւանդանոցներ—այսինքն 6000 հոգի մէկ եկած—միջրոպի արտադրութեամբ կը մրցակցին. և այս կերպ երթան հեռուն փնտռելու յարմար տեղ մը, դոնէ թոքախտաւորներու համար։ Ո՛ւր, պիտի հարցուի։—Իսկոյն, առանց կանխաւ լուրջ ուսումնասիրութեան մը, պատասխանելը անխոհեմութիւն է, բայց այսուհանդերձ, զոր օրինակ Գնալը Կղզին, ուր մաքուր օդը անպակաս է, ծովուն մէջ տեղը. հեռու ապականութեան տարրերէն և փոշիէն, ծխնելոյղի մուխէն, քաղաքին և մեռելատաններու մերձաւորութիւնէն, Գնալը կղզին և ընդհանուր կերպով կղզիները, Չամլըճայէն և Եադաճըզէն փչած մաքուր հովէն շարունակ հաղմահարուած են։ Նոյնպէս

են Սկիւտարի բարձունքը, ուրկէ Սև ծովուն հովերը կը խոտորին Մարմարայի կապոյտին վրայ: Բարձր տեղերուն հեռաւորութենէն խրաչելու չենք. որովհետեւ ապաքինարանին բնակիչները անկողնոյ ծառայող հիւանդներ չեն, անոնք առողջ քալուածքով կը քալեն, ախտը ներքուստ է որ գաղտնագողի իր անողոք աւերը կը գործէ:

Սկիւտարի տեսարանը ո՛չինչ կը նախանձի հելուետական բարձրաւանդներէն. ինքն ալ արեգական վերջածայրներուն հրավառութեան մէջ լոցարծարծ կը վառի ոսկեղոծ, արեւը շարունակ հոն կը չրջի և հոն է որ իր վերջին բարեւը կը թողու՝ կանուխ վերագարծի խոտուժով: Վերին Պոսֆոնի կողմէն ալ կարելի է գտնալ յարմար տեղուանք. միթէ քննութիւնը իր սքանչելի պարգեւներէն բան մը զլացած ունի՞ Բիւզանդիոնի, որ Սև ծովէն շարունակ հողմանարուած, թէ՛ ծովեզր ունի՞ գեղազուարճ, թէ՛ բարձրաւանդակներ՝ գեղեցկադիր:

Առողջապահական այս տեսակ ձեռնարկի մը մէջ, քարի կամքը պէտք չէ՛ ընկրկի առաջին դժուարութեանց հանդէպ, մասնաւորապէս երբ իրեն ճիգերը կը թափին յօգուտ մարդկային ցեղին տարաբախտիկ տարրին համար, որ ստէպ պատասխանատու ալ չէ՛, այլ սերած է, ինչպէս սովորաբար մարդիկ կը ժառանգեն դրամն ու հարստութիւնը:

Թո՛ղ բարին թշուառը բարւոքէ:

Թո՛ղ դրամի ժառանգութիւնը հասնի ի նպաստ ախտը ժառանգողին և այս կերպ թո՛ղ ծնի բարութեան չաստուածը:

Ժառանակներուն հետ բարքերը փոխուած են: Ատենօք նշանաւոր եւ բարեգործ անձանց յիշատակին յուշարձան եւ կամ դամբան կանգնելու պաշտօնը յաջորդ սերունդներու կը պատկանէր. այժմ ընդհանրապէս այդ խնդիրը իրենց կենդանութեանը կարգադրելով, ամէն հոգ ու խնամք—և ծախս իրենք կըստանձնեն:

Բարեգործելու առիթը չէ որ կը պակսի:


Բերա

ԼԵՒՈՆ ԿԻՒՐԵՎԵՍՆ

ՎԵՐՋ

Գ Ե Ղ Ե Ց Ի Կ...

(ՀԱՅԵՐԱՆՍԱԿԱՆ ՆՈՐԱՎԷՊ)



Գեղեցկութիւններ կան, հրաշալի պատկերներու նման, զոր մարդ հիացմամբ կը պաշտէ. անոնք հոգին ազնուացնող ներշնչումներ կ'ազդեն, և միշտ վսեմ են՝ իրենց խաղաղ ու անշօշափ արտայայտութեան մէջ:

Գեղեցկութիւններ ալ կան, վնկութեան կիւտին նման, որ կը տանջեն. մարդ անոնք հասկնալու անկարելի ճիգին մէջ կը մատնուի. անաւոր գաղտնիք մը կայ անոնց կընձուստ արագետումին մէջ:

Ալիսին գեղեցկութիւնը վերջիններէն էր. հրաշալիք մը, որ ծուղակներուն էն հմայիչն էր. ինք գիտակից էր իր ուժերուն: Եւ երբեմն ինք ալ կը վախնար անոնցմէ:

Իր նոճիացած հասակը ազնուատոհմի դիւրաթեքումներ ունէր. և իր քալուածքին մէջ դիցական խրոխտութիւն մը կար: Երեսնոսի պէս սեփսե մաղեր, կարծես հասարակածի մէջ ծագկած, զոր Գլէօ աը Մէոօտի ոճով կը յարդարէր. երկու կողմէ մինչև վարդազոյն թափանցիկ ականջներուն կէսը բերուած ու յետոյ ծոծրակին վրայէն վեր ժողվուած: Ասոնք իր ճերմակ անփայլ մորթին հետ զգլխիչ հակադրոյթ մը կը կազմէին և կարծես իրենց ստուերը փռած էին անոր վրայ: Աչքերը, որոնց նման մարդ անգամ մը միայն կեանքին մէջ տեսած ըլլալ կը յիշէ, զլուխ—գործոց մըն էին. կապոյտ, կապոյտ, մութ կապարազոյն, հեռուէն անշուշտ սև, մօտէն հազիւ կապոյտ, ու նշաձև, ու խոշոր, սև երկար թարթիջներու շուքէն աւելի ևս ստուերոտուած, աչքեր մանաւանդ գեղեցիկ որովհետեւ նայիլ գիտէին: Նւայդ նայուածքը հաշիչ մըն էր որ կը թմրեցնէր, եղաղէ բարձրու վրայ կը պառկեցնէր, անհաւատալի առփանքներու յոյսով կ'օրրէր:

*

*

Առաջին անգամ երբ տեսայ ինքը, պանդուկի մը մէջ, գամուած մնացի, շանթահարուածի պէս: Տեսիլ մըն էր գողցես:

Տիկին մը, որ կ'ախորժէր հետս իյնալէ, հասկցաւ ապուշութիւնս. քովս մօտեցաւ և չարածճիօրէն ականջէս փսփսաց.

— Փախի՛ր իր աչքերէն. անոնց մէջ թոյն կայ:

Թո՛յն, այդքան հրեշտակային նայուածքի մէջ: Դէպի այդ աղուոր սիւռէդը սեւեռուած, ակնարկս կը հետեւէր անոր, երբ նըրբանցքին ծայրէն կ'աներեւութանար արդէն:

Ու յանկարծ, իբրեւ տանջող երազէ մը սթափուած, և մեկնութեանը հետաքրքիր, աթոռս մօտեցուցի սրամիտ բարեկամուհիիս օրրաթոռին. ան քաջքող ծիծաղով մը՝ աչքը ինէ իր մօտը նստողներուն դարձուց,

— Ծուռակը ինկաւ, դռնելով:

Խնդուք մըն է բրդաւ, ես ալ խնդացի, առանց բան մը հասկնալու:

Ալիս, որ հիմակ կ'ըսուէր անցուկ էր, վտանգաւոր կ'ընէր ճանճցուած էր: Դարպասողներու լեզէն մը տառապած էր միշտ իրեն համար և իր ամուսինը տարին չի լրացած խենթեցած էր: Յանցանքը իրը չէր սակայն, անխիղճ պըրողութեան մը զոհերը չէին անոնք, այլ իսկատիպ գեղեցկութեան մը տառապեցնող տարրերուն անոթակելի և անդիմադրելի զօրութեան:

Գիտէր որ գեղեցիկ էր, և յաղթանակներուն ետեւէն ինք չէր որ կը վազէր: Կը բաւէր որ անցնէր փողոցէն, կամ օթեակին առջև ցուցադրէր ինքզինքը, բոլոր աչքերը և դիտակները իրեն կ'ուղղուէին: Գեղեցկագոյնը չէր հարկաւ Ալիս կ'ընտրուէր և գեմին մէջ, բայց իրեն պէս առանձնաշնորհեալները ամէն տեղ և ամէն ժամանակ պատմական եղած են: Հիւ մը ունէր, և աս չի բացատրուիր:

Էապէս սիրտ չունէր այդ բախտին չփայածը. երբեք չէր սիրած: Ի՛նչ անիրաւութիւն. այդքան շատ դեղ, և այդքան քիչ սիրտ:

Իրեն համար, պարզ ու տոհմիկ ճաշակներու տէր, չրթունք մը չրթունքի վրայ, նայուածք մը նայուածքի մէջ, ահա՛ ո՞րքը. վայելքը երջանկութիւնն էր, և սիրոյ տառապողները կեանքին յիմարներն էին:

— Կրակին մի՛ դպչիք. կ'ըսէր պարզմտօրէն՝ իր մէջ վտանգաւոր էակը բացատրելու համար:

Լեզուն կը հեռացնէր, երբ անտես ու անխոյս կախարդանք մը կը կիւսէր իր քրծնողները:

Կը բաւէր որ ժպտէր, և մանաւանդ նայէր:

* *

Լեւոն, ջղուտ ու մռայլ տղայ մը, խորունկ մանաւանդ, առաջին հեղ որ տեսաւ Ալիսը երեկոյթի մը մէջ, այն ատեն իր բոլոր թարմութեան և պարզութեան մէջ, ակնախառնող, պաշտելի դիցանոյշ մը ինչպէս կը նկարագրեն պարիկի քերթուածներու մէջ, սիրահարուեցաւ խենթի պէս, և իր առաջին մտածումը եղաւ կնութեան խնդրել ինքը:

Իր սէրը, իր անսովոր խառնուածքին համար, չափազանցութեանց պիտի յանգէր, ինչպէս ամէն բան իր մէջ: Եւ արդարեւ անբացատրելի ճիգ մը, աւելի ևս տագնապ մը, կը մատնուէր իր խօյ սիրոյն մէջ դէպ ի Ալիս, անծիր բարձրութեան մը հասնելու անկարելի՝ բայց վսեմագոյն ժեստին մէջ:

Անրնական սիրահար մը, արուեստագէտի սիրով մը յափշտակուած, գեղեցկագիտօրէն կը տարրալուծէր անոր բոլոր գիծերը, կրքերը, ծիրերը և ցայտքերը, դոյները, ձևերը, և այդ սքանչելի գեղեցկութեան մէջէն միայն կը տեսնէր, կը զննէր ու կը հասկնար Ալիսին միաքն ու հոգին, որպէս թէ անոնք ցոլքերը ըլլային գերբնական անտես լոյսի մը:

Երազ մըն էր Լեւոնին համար անոր ճեմակ ու գունաթափ մօրթին տաքութիւնը ու սղտիկ նուագոյն շուրթերուն աննշմարձ գտումէն ծլած փոսիկներուն փթթումը, վայելք մըն էր մինչև արքշառն՝ անոր խորհրդաւոր և խորաթափանց նայուածքը և անոր միամիտ ու կախարդող ժպիտը, հեշտութիւն մըն էր անոր հարուստ տարփոտ ծոծրակը և ցայտուն հեւքոտ կուրծքը:

* *

Երջանիկ զոյգ մը կը թուէին ըլլալ՝ անգամ մը ամուսնացած, և իրաւ ոչինչ կը պակսէր այդ սիրուն բոյնին:

Ալիսին գեղեցկութիւնը և Լեւոնին սէրը իրար ամբողջացնող մէյ մէկ գլուխ—գործոցներ էին :

Առաջինը նիւթն էր, պաշտելի, եւ երկրորդը—սէրը—անոր հոգին էր, անմեկնելի :

Պարիկ մը կամ պուպրիկ մը, գեղճն մը, կամ կուռք մը, Ալիսը : Նոր մատոննա մը, երազներու մէջ երեւցած երբեմն :

Իսկ Լեւոն արթիւթ մը, նրբագայտուած, կամ միսթիք մը, մոլեռանդ, որ արուեստին որ հաւատքին մէջէն կը հիւսնար, և թէ կը պաշտէր :

Անհաւատալի սէր մը, ջլախաւորի սէր մը, լեցուն գեղուններով, լեցուն գեղճումներով, եռանդի և թմբիրի փոխիփոխութիւններով, արբուալից վերացումներով և գեանաքարչ պաշտումներով, օր օրի ուռճացող, ամէն իրերը, ամէն գաղափարները, ամէն ինչ ընդգրկող, հետդհետէ ամէն բանի վրայ սիւսող ինքնատիպութիւններով, վերջապէս կեանքը յատկանշող և նոյն իսկ լըրացնող ընդլայնումներով :

Երբեմն ժամերով դէմը կը նստէր, յափշտակուած, ինչպէս խանդավառները կ'ընեն Տիրամօր պատկերին կամ Միլոյի Վէնիսին արձանին առջև, անյազարար ըմբոխներով այդ թանկազին վայրկեաններուն տիլէթանդի երջանկութիւնը : Ու, մէկէնիմէկ, չի զսպուած ճիշդ մը՝ որ կը խղէր Լեւոնին, երկու ձեռքերը միացուցած՝ դէպի ինքը կարկառելէն, աղերսագին :

—Գեղեցիկ ես, Ալիս, գեղեցիկ ես, գուն գեղեցկութիւնն ես :

Ալիս ոչինչ կը հասկնար խորապէս այս անհեթեթ ծայրայեղութիւններէն, ու կը ձգէր որ ուղածին, ոչէս իր ամուսինը սիրէ ինքը : Անարտունջ կը կատարէր անոր էն յիմար քմահաճոյքներն իսկ : Թէև ինք ահագին աղդեցութիւն բանեցնող կին մըն էր, բայց գործողութեանց մէջ կրաւորական էր. բռնունդներն ու մըն էր միայն Ալիս, քնար, բայց ո՛չ բանաստեղծ :

Լեւոն երբեմն քօսեր կը կաղմակերպէր, որպէս թէ ինք արձանագործ մը կամ նկարիչ մը ըլլար, և իր կինը՝ գոհնիկ մօտէլ մը :

Ղուսամիտիին մօտ կը նստեցնէր Ալիսը՝ կարդալու դրադած՝ կամ դաշնակին առջև՝ կտոր մը նուագած առեն հոտին նայել տալով. կամ ծառի մը տակ կը կեցնէր ու թեւը ոստերուն կը փաթթէր. երբեմն կը հանուեցընէր, ինք իր ձեռքովը ու աստիճանաւոր մերկութեան համաձայն արձանային թապլօներ կը յարմարցնէր. կամ դետնէն բարձրացող հայելին առջև կը տանէր, ու անոր եղեգեայ հասակը կը կքեցնէր իր թեւին վրայ. և դեռ այսպէս, մինչև որ ջիղերը յոգնէին, և ուժասպառ իյնար աթոռի մը վրան բացադանչելով,

—Օհ, գեղեցիկ ես, Ալիս, բայց շատ գեղեցիկ ես :

Եւ իրեն կը թուէր տակաւին քիչ հասկընալ այդ գեղեցկութիւնը ու քիչ սիրել Ալիսը :

—Քեզ ինչո՞ւ ուղածիս չափ չեմ կրնար ըմբռնել. ինչ բարձրութիւն է աս, որուն հասնելու համար զո՞ւր կը ջանամ, և միշտ ցնորք ունիմ՝ ինչպէս վիհի մը եզերքը : Պիտի ուղէի սիրել քեզ, ինչպէս սակաւին մարդ մը սիրած չէ աշխարհիս վրայ : ու չեմ կրնար : Քեզի համար կեանքս հիմակ, հիմակ, գաւաթի մը պէս փշրելու աստիճան ինքզինքս մոռնալով է. որ կը սիրեմ քեզ, ու կըղգամ աւաղ, թէ քիչ է այդ սէրը, և քեզի անարժան : Իմ պաշտամունքս, զոր դեռ հաւատացեալ մը չի խնկարկեց Աստուծոյ իսկ, կը խոստովանիմ որ հիւլէ մըն էր : Գեղեցիկ ես, Ալիս, գեղեցկութիւնը դուն ես... :

Ու կը խօսէր, կը խօսէր ան դիւրին, անդուլ, ջիղ կտրած, ու պերճախօս, տեղէն կաճաց կամաց գետին սահելով, մինչև որ Ալիսին ծունգերը ինար ու, անոր քղանցքին քսելով տենդոտ ճակատը, յուսահատի նման լար :

Այս սէրը փոխած յեղաշրջած էր Լեւոնը : Այն սիրուն ու սրամիտ աղէն մնացած էր այլեւս ինքնամիտի և անհաւատարմի ջաւրաթէր մը. օրէ օր միտքը կը բթանար, յեղողութիւնը կ'ըսպառէր. ապուշի պէս բան մըն էր :

Հիացումէն յոգնած, երբեմն մտասեւեռ
կը մնար երկար ատեն. և իր աչքերը կար-
ծես ամպերու կը նայէին. հիւանդագին թըմ-
բութիւն մըն էր ատ:

Ամէն բան կը մոռնար: Աչքին առջև գըտ-
նուած մէկ առարկան երբեմն կը փնտռէր
ընդերկար: Շատ անգամ գործատեղին կ'եր-
թար ու բան մը մոռցածի պէս շուտով տուն
կը վերադառնար: Ալիսին տեսքը բաւ կ'ըլ-
լար քիչ մը սթափեցնելու համար: Բայց ա-
մէն մէկ դարթումին կը յաջորդէր վհատու-
թիւն մը որ՝ հետզհետէ մ'ընչեւ ասպնջութ կը
ջղաձգուէր, որպէս թէ ինք վաղեմի հաշա-
մը ըլլար:

Ալիս մտահոգ ըլլալու սկսած էր. և ամէն
անգամ որ տան բժիշկը, նախադգուշութեան
համար՝ իրրեւ բարեկամ, կ'այցելէր, Ալիս
անոր կը հետեւէր մինչև դուռը և անձկալից
կը հարցափորձէր գիտութեան մարդը: Բը-
ժիշկը չափուած լըջութեամբ մը գիտութեան
սնամէջ և խուսափողական խօսքերը կը շա-
րադրէր, սնամէջ՝ որովհետեւ անոնք դար-
մանին չէին ակնարկեր, խուսափողական՝
որպէսդիւ անգութ ճշմարտութիւնը չի վըր-
դովէր զուր տեղը հէք պարզամիտ կ'ընէր:

—Տեսակ մը մենագարի ջլահատութիւն,
որ ընդհանրապէս ալքօլայմոլներու կը պա-
տահի. կամքի թուլացում մը, չըսելու համար
անդամալուծութիւն. իրմէ խոյս տուէք, պիտի
ըսէի ձեզի, Տիկին, եթէ ցաւին սկզբնապատ-
ճառին հետ միանգամայն չըլլալիք լաւագոյն
դարմանը: Խոնկ կրնամ ըսել. այսօր սէրը կամ
գեղեցիկութիւնը հիւանդ կ'ընէ հոգիները տա-
կաւ առ տակաւ: Արդէն հոգիի ցաւերու
դարը սկսած է. և մեր դիրքերը շատ քիչ կը
խօսին հոգիին վրայօք...:

Ներհուն հոգեբանը կը խօսէր գոց ըրածի
պէս, մեքենաբար, թախծոտ դանդաղու-
թեամբ մը, օգին մէջ, հեռունները նայելէն
պիշ, ու կը մեկնէր մրմնջելով,

—Դէպի մշուշները կը ճամբորդէ անոր
հաբին...: Բայց յուսանք, Տիկին յուսանք:

Այս բաղդատաբար հանդարտ, բայց քայլ
առ քայլ անկուծի վիճակը շատ չի քշեց, եւ

քիչ քիչ ուղեղային խանդարման չարաբուստ
ապացոյցները տուաւ: Զառանցանքներու նոր
թուական մը սկսաւ. Լեւոնին հիւանդ հոգին
կը խարխափէր: Սիրած պաշտած էակը
նորը անդայտ տարտամութեանց կիսաթա-
փանց նշուլանքով կը լուսապսակուէր իր
պէրոտ երեւակայութեան մէջ:

Անգամ մը, սովորական տեսարաններէն
մին տեղի ունեցած էր:

Ալիս, առտու մը, դեռ անկողինն էր:
Իր սեւ հոծ մաւերը ժանեկադարձ սնարին
վրայ վառած էին դգուանոյ: Հոլանի մաս
թեւերը ու վարդերու շուքէն թեթեւ մը
չիկնած շուշանածոյլ լանջքը, կասկարմիր
մետաքսեայ վերմակէն դուրս, իրենց արեւ-
ցուցիչ հրապոյրները կը ցուցադրէին: Աչքերը,
դեռ նոր բացուած օրուան առաջին ճառա-
գայթներուն, խաղաղութ մը ունէին, եւ՝ քու-
նին մէջ աւելի մ'ընցած՝ յանկարծ լոյսին հո-
սումէն կը շուարէին, կը շլանային անոնք:
Մանրիկ ազուրիկ շուրթերը, կիսաբաց, մար-
գրիսներու շարքը ցոյց տալու բնադղային
պէրանքով, կը կարկառէին առաջին համբոյ-
րին: Եւ իր ամբողջ մօրթէն հեշտալից ջեր-
մութիւն մը կը բուրէր, և իր բոլորաթիւ
մեղկութեան դաղջ ու սարսուռն մ'ընդորոտ
մը կը գոլորչիանար:

Ինք դեռ քուն էր, երբ Լեւոն, անկող-
նին քով ծնրադիր, անձայն և անչարժ, կը
վայելէր այսպէս այդ անըջային տեսիլքը:

Ալիս, հաղիւ աչքը բացած, տեսաւ իր
ամուսինը, ու հրեշտակի մը կոյս ժպիտովը,
կատակեց անոր հետ.

—Առտուան ողճ թղ կ'ընես:

Լեւոն, ծայրայեղ յոյզքի մը մասնուած,
աւելի քան երբեք նուաճուած էր այս հո-
յակապ գեղեցիկութեան լիակատար հասկա-
ցողութեան և բացարձակ տիրապետումին
ներքեւ: Փորձեց իր փաղաքուշ բանաստեղ-
ծութիւնները կրկնել իր պաշտելիին. կարծես
լեղուն կարկամած էր: Հաղիւ կրցաւ, մեծ-
կալ ճիղէ մը վերջ, արտասանել, անձնիւր
վանկը միջոցելով.

—Գեղեցիկ ես...:

Իր տխրամած ճակտին վրայ նշուշանք մը պլպլաց. հուսկ քրտինքի կաշկանկեր՝ որ թրջեցին մազերուն արմատները: Մատերը կը գողգողային, աչքերը կը շրջէին, ու շուրթերը կը շարժէին անդադար, ու դեռ կարծես լռութեան մէջ կը հծծէին.

— Գեղեցիկ ես, Ալիս, գեղեցկութիւնն ես...:

Այդ օրէն վերջ, ^{***} ամպերու մէջ փաթթուած կը ներկայանար իրեն Ալիսին գեղեցկութիւնը, բոլորովին աննիւթ, անշուշտ, ինչպէս իտէալը՝ զոր տարատառութիւնները կը մշուշեն, ինչպէս յաւիտենութիւնը՝ զոր աստուածային գաղափարներու անկարելիութիւնը հեռաւոր կ'ընէ և միգապատ:

Իրեն համար այնքան հեռու կ'երեւար արդարեւ, և այնքան բարձր, որ չէր փորձեր, չէր իսկ մտածեր այլեւս իր մատով դպչիլ անոր, և դիպուածաւ տեղի ունեցած ու է հպում մը՝ հակասելով իր նոր ըմբռնումին հետ՝ ջախջախիչ հետեւանքներ կ'ունենար. տեսակ մը լէթարժիի մէջ կը թաղէր սիրահարը երկար ատենի համար:

^{***} Լռութիւնները կը խզուէին միայն դանդաղ անկապ խօսքերով, խառնիխառն, ընդմիջուած, գրեթէ հետեւեալ թօնին վրայ՝ անկարգ ամփոփուած սապէս.

— Ալիս, ո՛ւր կ'երթաս, ո՛ւր կ'ը բարձրանաս: Ալիս, գեղեցիկ ես, գեղեցկութիւնդ կեանքիս ամէնէն մեծ երազը եղաւ: Պիտի իջնայ, պիտի իջնայ հողիս, վիճերուն յատակը, ինչպէս դուն կը բարձրանաս, կը բարձրանաս դէպի երկինքին վերելքը: Այի՛ս, վաղը քեզի համար տաճար մը պիտի կանգնեմ, և ան իմ չիրիմ պիտի ըլլայ: Անգամ մը չեմ խօսիր հողիս: Կեցի՛ր, մտածեմ, կեցի՛ր պատմեմ ձեզի: Ալիս, ինծի տո՛ւր, տո՛ւր վայրկեան մը, տո՛ւր աչուրներդ, հոսուբաւմ անոնք, ծաղիկներ ևն անոնք, դրախտը բուսած: Պիտի վազեմ քեզ տանող ամպերուն ետեւէն. ու պիտի բռնեմ գեղեցկութիւնդ, որ իմ էր, ինծի համար էր: Ալիս, ո՛ւր կ'երթաս վա՛ղը: Կեանքէն ասդին, և մահէն անդին...:

Յնորքի բողբոջներուն չէր նշմարեր Ալիսը. անոր գեղին հոգիին հետ կը խօսակցէր: Իր նայուածքները պարապին մէջ կը սառէին,

ու երբ կը լռէր իր ձայնը, մթադնած ու փոսացած աչքերուն մէջ յաւիտենական դարձացում մը կը բանդագուշէր:

Ու, հետզհետէ, լռութիւնը կը դերեզմանանար անոր հոգիին վրան: Յնորքները կը նուաղէին. յետոյ Լեւոն իր մօլորած միտքին մէջ կ'ապրէր նոր կեանք մը անտաւոր դէպ ի անդոյութիւնը, անգիտակից՝ բայց երջանիկ, հիացումով սողորուած՝ երեւակայելով ժպտագին իր պաշտած գեղեցկութեան աստուածացումը, հետեւելով հմայուած անոր եղերային վերելքին դէպ ի սուրբ բարձրութիւնները՝ ուր կը մնային յառուած հետեւողներ իր ոգեւարային աչքերը:

^{***} Բայքայումը իր դործը տեսած էր, աւա՛ղ: Խարոյական ուժաթափումին, կոմքի անդամալուծութեան, ճիւղերու սպառումին, յաջօրդած էր ֆլէկման, հոգիին պաղուցթիւնը, խորհրդաւոր անդգայութիւն մը՝ զոր հազիւ կցկտուր բառ մը, երբեք լսելի, կամ բնազդային ժեստ մը, միշտ իմաստալից, կ'ընդմիջէին երբեմնակի:

Քունը խոյս տուած էր. ու միշտ կը նստէր ան, բաց, պիչ: Իր աչքը կը մտէր ցուրտ դատարկութեան մէջ, ու մշուշին մէջէն լոյս մը միայն կը շողար հոն, և այդ լոյսը Ալիսն էր, ա՛լ իտէալը՝ անհատանելի ա՛լ անուրջը՝ անմահիւնելի, ա՛լ խորհուրդը՝ երկրպագելի — ինչպէս ամէն խորին գեղեցկութիւն՝ զոր հոգին բացարձակապէս կը հասնիայ և գերանակոնօրէն կը սիրէ:

Եւ օր մըն ալ վերջնական ճիւղ մը ըրտնիք իր վրայ, և իր շուրթերը, այլեւս իրապէս կը պուծնէ խորին լռութեան կաշտնքովը, քանի մը վայրկեան խաղային:

Ալիս, միշտ միամիտ, և բոլորովին անծանօթ այս հոգեկան ամենամուրբ տառապանքին, յոյսի արծարծում մը ունեցաւ:

— Գեղեցիկ... մոլտաց հիւանդը տնոգին դժուարութեամբ:

Ու իր սառ աչքերը ժպտեցան, երջանիկ ժպիտը անբջային հիացումին, դէպի երկինք ժպիտ մը՝ միշտ միեւնոյն ուղղութեան, հոն:

Ու իր թեւերը, օդին մէջ կտրկառուած, Ալիսին՝ որ այլեւս իտէալացած էր, մնային այդպէս, աշարժ, պաշտամունքի վսեմ ժեստ մը դժելով մահուան ցուրտ և տարստմ յաւիտենութեան մէջ...:

ՎԱՅԱՆ ՄՈՒԼԵԶԻԱՆ

ՇԱՐԱԹԸ

Շարաթը զոր կը բոլորենք՝ 1903 և 1904 տարիներու սահմանագծին վրայ կը գտնուի, իր հրաժեշտը տալով հինին ու ողջոյնը՝ նորին։ Ինչպէս ամէն թերթի՝ Մասիսի խմբագրութեան համար ալ սիրելի պարտականութիւն մըն է, Ամանորի առթիւ իր ջերմագին մաղթանքները ուղղել իր Պոլսերնակ ու հեռաբնակ բաղձաթիւ ընթերցողներուն, ինչպէս նաև իր բոլոր աշխատակիցներուն, որոնց համակրանքին ու աջակցութեան յարատեւութեանը վրայ վստահ՝ կը թեւակոխենք մեր հինգերորդ տարեշրջանը, իրրեւ Գրական Շարաթաթերթ։

Վերջացող տարուան 50րդ թիւին մէջ, խմբագրական Յայտարարութեամբ մը շնչտած ըլլալով արդէն Մասիսի 1900ի սկիզբէն հետեւած ուղղութեան գտած ընդունելութիւնը գրասէր հասարակութենէն, և զայն շարունակելու տրամադրութիւննիս, աւելորդ կը համարինք ծանրանալ այդ տեսակէտին վրայ։ Լրագրական ձեռնարկ մը ինքնին պէտք է գնահատուի ու յաջողի և ո՛չ թէ պարբերաբար մէջտեղ նետուած շլացուցիչ ռեկլամներու ապաւինելով, որոնք տարեգլխուն նոր դարկ մը կըստանան։

Մասիսի նախորդ թիւը մամուլին յանձնուած էր արդէն, երբ էջմիածնէն սպասուած հեռագիրը հասաւ Պատրիարքարան, ծանուցանող թէ Ս. Հայրապետը քաջառողջ վիճակի մէջ է։ Ն. Ս. Օծութեան հիւանդութիւնը անցողակի բան մըն էր, անքնութեան և մտաւոր յոգնութեան հետեւանքով։

Միեւնոյն ատեն, կը հասնէր Երուսաղեմի ալեգարդ Պատրիարքի հրաժարականին անակնկալ հեռագիրը, միաբանական ծանօթանհամաձայնութեանց պատճառաւ, որուն իսկոյն պատասխանեց Ս. Պատրիարքը՝ հեռագրելով Երուսաղեմ թէ այդ հրաժարականը անընդունելի է բացարձակապէս, և պատուիրելով միաբանութեան ամէն կերպով պատկառ մնալ իրենց հոգեւոր պետին կարգադրութեանց ու որոշմանց։ Օրաթերթերը յաջորդաբար ծանուցին արդէն ամէն ման-

րամասնութիւն, փոխանակուած հեռագիրներուն պատճեններն ալ հրատարակելով, և ուրախ ենք ծանուցանելով միայն՝ թէ Ս. Աթոռին Պատրիարքը կը շարունակէ այս պահուս իր Պատրիարքական բարձր պաշտօնը՝ իր ծանօթ հոգածութեամբ ու անձնուիրութեամբ, որպէս միշտ։

Գալով Երուսաղեմի գործերուն, ընդհանրապէս, անոնք ուղիղ ճամբու մը մէջ գրուած կրնան նկատուիլ այլեւս, Կեդր. Վարչութեան Պատուիրակներուն ընարութեամբ որ կատարուեցաւ Խառն Ժողովի այս չորեքշաբթի օրուան նիստին մէջ։ Ընտրուած պատուիրակներն են, ինչպէս յայտնի է, Կրօն. Ժողովի դեր-ատենապետ Տ. Վահրամ արքեպիսկ. Մանկունի և Քաղ. Ժողովի ատենապետ Տիգրան Էֆ. Եւստոֆեան որոնց յանձնուած է վարչական եօթը ծանօթ որոշումներուն գործադրութիւնը։

Թէև մինչև վերջին օրերը կը խորհուէր աշխարհական պատուիրակ մը միայն նշանակել, բայց Խառն Ժողովը յարմարագոյն դատեց՝ վանական ու վարչական գործերու համուս եկեղեցական մըն ալ ընկերացնել անոր, և այս սուշտօնը վիճակեցաւ Մանկունի Սըրբազանի։

Հանրութեան մտքին վրայ որ, զիրար հակասող լուրերու հրատարակութենէն, կարգ մը թերթերու կողմէ Երուսաղեմի վանքին վարիչներուն դէմ ուղղուած դատաւիետումներէն չիօթած, կամ աւելի ճիշդը ըսելով՝ գայթակղած է, լաւ տպաւորութիւն մը գործելու սահմանուած է Կեդր. Վարչութեան պատուիրակներուն անուանումը որ, Երուսաղեմի մէջ ալ տարակոյս չունինք թէ գահութեամբ պիտի իմացուի, Տ. Յարութիւն Ս. Պատրիարքէն սկսելով մինչև է՛ն անխօսուկ միաբանը։ Վասնզի, պատուիրակներուն կատարելիք քննութիւնը միայն պիտի զօրէ իրողութիւնները ճշդելու և վերջ մը տալու այն վէճերուն, անհամաձայնութիւններուն որոնք ամէն օր, հոս՝ մեր լրագրութեան մէջ ալ գտնուելով իրենց արձագանգը, յաճախ ծուռ ու սխալ, այնքան տխուր տպաւորութիւն մը թողուցած են։

Տ. Ա.

ՎԱՌԱՐԱՆԻՍ ԱՆԿԻՒՆԷՆ

ԲԵՐԱ, 31 Դեկտեմբեր 1903
Զորքը շարքի

Փողոցի երգեհոնները կը շարունակեն տակաւին, մինչև կէս գիշեր, նուագել իրենց դարձգարձիկ եղանակները, դուռներուն առջին գունաւոր թուղթերով զարդարուն խոշոր լապաւրներով, մինչ տուններուն մէջ՝ պատուի սեղանները պարպուելու վրայ են արդէն, և աւանդական շնորհակտութիւնները, մաղթանքները շատոնց փոխանակուած ։

Որչափ ալ տոնմային սովորոյթներէ ցրտացած ըլլայ մարդ կամ ակադտիկ ձեւանալ ուղէ, տարուան մէջ տօներ կան ուր ընտանի երգիքը աւելի անոյշ կ'երեւայ և նա հասկնալիս բարքերը տեսալ մը կարօտով կը փնտուռին ։ Իմ մասիս, նախաձեռնար պիտի սեպէի այս գիշեր, սա դուրսի գոհնիկ զբօսանքներու արձագանդին ու ժխորին տեղ, որ ծննդաւայր դիւղիս ու տղայութեանս օրերուն մէկ սովորութիւնը անհետացած չըլլար, ու արշալոյսէն առաջ լսէի կերկրածայն հրաւերը ժամկոչին, իր ճակնը սալայատակին քարերուն զարնելով որ ընդոտ կ'արթընցնէր զմեզ—«Ո՛վ բարի քրիստոնեայք, եկա՛յք ի սուրբ եկեղեցի» ։ Հոս՝ քաղքին աղմուկներուն մէջտեղ՝ ո՛չ իսկ զանգակին ձայնը կը հասնի ականջիս ։

Ու նոյն բանը՝ Ծնունդին, զոր պիտի տօնենք քանի մը օրէն ։

Բայց կը տեսնեմ որ, անդալաբար, կ'աղանդի—Ծնունդի յօդուած մը գրելու կը մղուիմ, մինչ ուրիշներ բիովին լրացուցին ու կը լրացնեն այդ պէտքը՝ դա՛ւազան թերթերու մէջ ։ Յետոյ, գաւառի թղթակիցներ ու աշխատակիցներ, ամէն տարի այս եօթնեակին, կը զրկեն մեզի իրենց աւանդական հանդէսներուն նկարագրութիւնները, իրենց երգերը, և այնչափ շատ բան գրուած է այս նիւթին վրայ, որ սպառած կրնայ նկատուիլ ։

Նորութիւն մը որ մէջտեղ դրուեցաւ Ամանորի առթիւ, Բարիղի աղջկանց վարժա-

րանի մը տեսչութեան այն որոշումն էր, — զոր իր Միջազգային Գրոհիկին մէջ արձանագրեց Արեւելք, — որով կ'արգիւտէր աշակերտուհիներուն՝ նուէր տանիլ իրենց դաստիարակուհիին, որովհետեւ աղքատի ու հարուստի, շատ տուողի ու քիչ տուողի խըտութեան խնդիր կրնայ ծագիլ ու հետեւանալ զգալի կ'ըլլայ ամբողջ տարին, վիճակացոյցերու պատրաստութեան մէջ ։

Վարժապետին կամ վարժուհիին կողմէն օրը նուէր տանելու սովորութիւնը ամէնէն աւելի արմատացածներէն մէկն էր ատեն մը մեր դպրոցական կեանքին մէջ, մինչ զուցէ մեզմէ քիչեր իմացած էին որ Ֆրանսական ոստանին մէջ ալ գոյութիւն ունի անիկայ ։ Յոռի՞ թէ լաւ սովորութիւն—իւրաքանչիւրի դատողութենէն կախում ունի,— բայց սա ճշմարիտ է թէ մեր տղայութեանը, տարուան այս օրը, կ'աղանդին նախնիքաց օրը, սրտի սաստիկ տրոփումներ ունեցած ենք ամէն մէկս, թէ մեր ծնողքը ի՞նչ պիտի տայ որ տանինք «պատուելի»ին կամ «միւսիս»ին, և թէ անոնք ալ փոխադարձաբար ի՞նչ անակնկալ վերապահած են մեզի, ոսկեղօծ օրացոյց մը, Տիրամօր պատկե՞ր մը, թէ... «չա՛տ ապրիս» մը ։ Որքա՛ն տղաքներու լաջը տեսեր եմ չուրջօ, որովհետեւ հայրը կամ մայրը կարողութիւն չունէին գրամ տալու իրենց դասատուին տանելու համար ։ Խեղճ պղտիկներ, որոնց համար ու օր մը կ'ըլլար կ'աղանդը, ուրախութեան ու բերկրանքի այդ օրը ։

Չեմ գիտեր թէ տակաւին գոյութիւն ունի՞ այս սովորութիւնը մեր թաղային կամ գիւղական դպրոցներուն մէջ, և եթէ Բարիգեան աղջկանց վարժարանին որոշումը օրինակ առնել ուզենք մեզի, ո՛չ թէ դաստիարակին ու դաստիարակուհիին իր ստացած նուէրներէն աղքուելուն տեսակէտով ըլլալու է, այլ մանաւանդ աղքատիկ զըպրօցականներուն զգալի ընել չի տալու համար իրենց նիւթական զրկեալ վիճակը որ, ետքէն, կեանքի ասպարէզին մէջ, չա՛տ պիտի չեշտուի ու երեսնուն տրուի արդէն ։

ՄԵՆԱՍԷՐ

ԾՆՈՒՆՊԻ ՀԱՐՈՅԵՐ



Երբ հասած է Տարիքի ձմեռն ու ամեն ինչ կեանքին
խոնարհոււմը կը գուժէ, եւ սառուցիկ մեր մասներ՝
Երբ դողաճաւ կը չափեն քեզանն ուր կը հերմըկին
Նըրքին քելերն որոնցմով սա մեր օրերն են հիսուսուեր,

Մերք անդրադարձ լիբասակ մ'երանութեանց վաղաջինջ
Խօլ ժպիսք մանկան մը կամ դիմասուսուերը կընոջ
Մը՝ կ'արժարժեն մեր սրտին մոխիւրին սակ բոց մը ջիւջ
Զերք ճանանչ մը մեր անցած գարուններէն սիրակոյ՛,

Այսպէս երբ լուռ անցառին, պարտեղին կամ մարզին մէջ
Հիւքի ամեն աղբիւր ա'լ ցամքած ըլլալ կը բըլի,
Եւ երբ երկիրը լբուի արեգակէն լուսապերն,

Ծաղկափրքիք բերնով գիրգ մանկան մը պէս նուրբ, զրկաւր,
Անոյ ինչպէս նայուածքը Կոյս Մարիամին, Ծընունդի
Փափուկ վարդը եղեամին սակ կը փրքքի՛ դալկաճաւ:
Թարգմ. Մ. Ո. ԷՏՄՈՆ ՖԱՐՆՔ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՆՕԹԵՐ

ԿԱՅՍ. ՊԱՐԳԵՒ.— ՎԷՆ. Կայսրը բարե-
հաճեցաւ հարիւր յիսուն ոսկի շնորհել մեր
Պատրիարքարանին, Կաղանդի և Ծնունդի
առթիւ:

ՆՈՐ ՏԱՐԻՈՅ առթիւ, Ս. Պատրիարքը
հինգշաբթի առաւօտ նախագահելէ ետքը
Մայր Եկեղեցւոյ արարողութեանց, Պատ-
րիարքարանի մէջ ընդունեց եկեղեցական-
ներու և աշխարհականներու շնորհաւորական
այցելութիւնները: Այցելութեան եկան նաեւ
պետական պաշտօնատարներ, դեսպանատանց
թարգմաններ, և այլն: Նոյնպէս, շնորհա-
ւորական այցետոմսեր հասան Ն. Սրբազնու-
թեան, բարձրաստիճան անձնաւորութեանց
կողմէ:

ԽԱՌՆ ԺՈՂՈՎՂԻ վերջին նիստին մէջ Ս.
Ս. Պատրիարքը ժողովին հաղորդեց Ս. Էջ-

միածնի գործերու մասին ինչ ինչ տեղեկու-
թիւններ:

ԿՐԾՆԱԿԱՆ ԴՈՐԾՈՅ Տեսուչի օգնական
Պէհա պէյ չորեքշաբթի օրը Ղալաթիոյ Խոր-
հրդարանը դալով, ուր գումարուած էր
Խառն ժողովը, տեսակցութիւն մը ունեցաւ
Ս. Պատրիարքին հետ:

ԵՐՈՒՍՍԱՆԻ Պատր. Փոխանորդ Տ.
Գէորգ Կալիսի. Երէցեան, Կաղանդին օրը,
Երուսաղեմատան մէջ ընդունեց ծանօթ եկե-
ղեցականներու և աշխարհականներու շնոր-
հաւորական այցելութիւնները: Մաքրիգիւղի
աղագայիններուն վարիագով և Պատրիարքա-
րանի հաւանութեամբ, Երէցեան Սրբազան
ստանձնած է այդ գիւղի եկեղեցւոյն առ-
ժամեայ քարոզչութիւնը՝ Ծնունդի տօնին
առթիւ:

Արտօնատէր Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ

Տպագրութիւն ԱՐԵՒԵԼԻՔ Օրագրի

Ի Ի Ն Ի Օ Ն

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԴ

ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ՖԱՐԻՉ 1828-1829

Հ Ր Դ Ե Հ Ի Ճ Ի Ի Ղ

Մինչև 1902ի վերջը հատուցեալ վնասք	274,000,000	Փր.
1902ին գանձուած ապահովագրին	24,000,000	»
Դրամագլուխ երաշխաւորեալ	119,000,000	»
Ապահովագրեալ զրամագլուխ	21,500,000,000	»

Կ Ե Ն Ա Ց Ճ Ի Ի Ղ

Մինչև 1902ի վերջը հատուցեալ վնասք	129,000,000	Փր.
Ընթացիկ ապահովագրութիւնք	272,000,000	»
Դրամագլուխ եւ պահեստք	158,000,000	»
1092ին գանձուած ապահովագրին	12,000,000	»

որ ընթացիկ ապահովագրութեանց գումարին հետ կը համեմատուի 60% — ինչ որ «Իւնիոն»ի ապահովագրելոց կ'ընծայեն հսկայ երաշխաւորութիւն մը ՈՐՈՒՆ ՆՄԱՆԸ ԿԱՐԵԼԻ ԶԷ ԳՏՆԵԼ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՉ ԳՈՐԾՈՂ ՈՒՐԻՇ ՈՐ ԵՒ Է ԸՆԿԵՐՈՒ ԹԵԱՆ ՔՈՎ:

Արեւելքի համար մասնաւոր սակացոյց՝ գեղջեալ գիւնեով: Նպաստաւոր պայմաններ անհամեմատ կերպով աւելի գերազանց քան ուրիշ ո՛ր եւ է ընկերութեան պայմանները: Շահաբաժիններու տարուէ տարի անմիջական վճարում, որով Իւնիոնի ապահովագրուողք ԶԵՐԾ են այն վնասներէն եւ յուսախաբութիւններէն, որոնց կ'ենթարկուին միշտ այն անձինք, որ շահաբաժիններու բաղաժան (accumulation des bônéfices) ՅՅՈՒԻ եւ ՎՆԱՍԱԿԱՐ դուրեքամբ գործող ընկերութեանց կ'ապահովագրուին:

Ընկերութեան դրամաստուգէ Ե ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԱՆՔԱՆ

Թուրքիոյ եւ Արեւելքի Տնօրէնութիւն

Պոլիս, Սուլթան Համամ, Բալաթ Քաթրըք Օղլու

Մասնաճիւղ՝ Ղալաթիա, Ինայէթ Խան: — Գործակալութիւնք Թուրքիոյ գլխաւոր քաղաքաց մէջ



ՅՈՎԱԼԷՓ ՊԱԼՊԱԼԵԱՆ

(ՄԵՂՐՈՒՆԻ)

ԱՏԱՄՆԱՐՈՅԺ

Մուղաֆէրիէ Հիւանդանոցին եւ

Պարսեւկան Դեսպանատան

Բերա, Մեծ Փողոց, Թագսիմ, թիւ 61

Զրաւնեան աբաւքման

Պալպալեան ա էն օր ալուայի ամէն տե-

սակ հիւանդութիւններով տալուապողները կ'ընդունի. իսկ Ուրբաթ, Կիրակի եւ Երեքշաբթի մինչեւ ժամը 5: Դիշերուան ո եւ է ժամուն կարելի է դիմել: Պալպալեան կ'երաշխաւորէ իր լեցուցած ու շինած ալուաները: Յորեկները ալուայ քաշել տալու համար որոշ վարձք մը չկայ. քաշել տուողին կամքէն կախեալ է:

Աղփասներուն ձրի

ԱՊԱՌԻԿ ՎԱՃԱՌՈՒՄ

ՀԵՐՃԱՅԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՎԵՐՁԻՆ ԳԻՆ



Եթէ կ'ուզէք ամէն տեսակ գոհարեղէններ ունենալ, աժան ու ճաշակաւոր, թէ՛ արեւելեան եւ թէ՛ եւրոպական ճաշակով պատրաստուած, ժամացոյցներ, արծաթեայ գաւազաններ եւայլն, դիմեցէ՛ք Պոլիս, Ոսկերչաց Շուկան, Մեծ-փողոց, թիւ 13:

Հարիւրին 20 կանխիկ, մնացեալին համար 100ին 5 չաբաթական վճարում: Կանխիկ գնողին համար հարիւրին 5 զեղչ: Գործածուած գոհարեղէնները եթէ վնասուած չեն՝ 100ին 10 զեղչով եւ կ'առնուին. իսկ ապառիկ գրնողներէն՝ 100ին 15 զեղչով:



ՌՕՍԻԱ - ROSSIA



ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԻԵՀ, ԿԵԱՆՔ, ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆՔ, ԱՐԿԱՄՔ

1881 մարտ 20ի Կայս. Ուքազով արտօնուած

Կեդրոնատեղին Բեդերսպուրկ, Իրեն յատուկ շէնքը:

Ընկերութիւնը խիստ նպաստաւոր պայմաններով ապահովագրութիւններ կ'ընդունի ԿեԱՆՔի վրայ, եւ ՀՐԻԵՀի, ՓՈԽԱԴՐՈՒԹԵԱՆ ՎՏԱՆԳՆԵՐՈՒ, ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՐԿԱՄՆԵՐՈՒ ԴԷՄ, ցկեանս ապահովագրութիւն ՇՈԳԵՆԱԻՔՈՎ ԵՒ ՇՈԳԵՆԱԻՔՈՎ ՈՒՂԵՒՈՐՈՒԹԵԱՆ ԱՐԿԱՄՆԵՐՈՒՆ ԴԷՄ, Ինչպէս նաեւ ՀԱՅԵԼԻՆԵՐՈՒ ԵՒ ԱՊԱԿԻՆԵՐՈՒ Կոտրուելուն դէմ:

Ընկերութեան դրամագլուխը, ամբողջապէս վճարուած 10,666,667 ֆրանք

Երաշխաւորութեան գումար աւելի քան 137,300,000 »

Ընկերութեան ապահովագրուողներուն վճարուած դրամագլուխ եւ վնասուց հատուցում 282,000,000 »

1902 տարւոյ մէջ գանձուած ապահովագին եւ տոկոս 54,000,000 »

Ամէն տեսակ տեղեկութեանց Բամար դիմել Կ. Պոլսոյ մասնաճիւղին, Ազարեան խան. վոյվոտա, Ղալաթիա:

ՍՐՄԱՔԷՇԻ ԶՈՒՐ

(ՊԷՅՔՕԶ)

ԱԽՈՐԺԱՀԱՄ, ԹԵԹԵՒ ՈՒ ՕԳՏԱԿԱՐ

Սոյն հանրածանօթ ազրիւրին ջուրը, ախորժանամ եւ վճիտ, յանձնարարուած է մայրաքաղաքիս ականաւոր բժիշկներուն կողմէ, որոնք անձամբ փորձած են անոր յատկութիւնները: Մասնաւորապէս, քիմիագէտ Պ. Բիէռ Արէռի տարրալուծած է զայն եւ Թալտէլէնի ու Գանլըգովաքի ջուրերէն գերազանցապէս լաւագոյն դասած է, ստուգելով որ անոր ջրաչափական աստիճանը 10 է եւ բնաւ ստամոքսի ծանրութիւն չիտար:

Տեղական հիւանդանոցներէն շատեր, իրենց բժշկապետներուն յանձնարարութեամբ, այս ջուրը կը գործածեն, որ ուղղակի ազրիւրէն կը բերուի ամենայն խնամքով եւ մաքրութեամբ, չիչեր ու տակառները հոն լեցուելով ու զմոտեւելով:

ՍՐՄԱՔԷՇ ԶՈՒՐին գերընտիր ու անմրցելի ըլլալը հաստատած են նաեւ, քիմիագէտ Տօքթ. Մաննիէզատ, հետեւեալ բժիշկները:

Տօքթ. Տուքա փաշա (ընդհ. քննիչ առողջապահական վարչութեան) Կապուչի, Զերրի, Սթէքուլի, Ավիլիանօ, Մալի, Միրապէլ, Բանայօթպէյ, Պալիտիս, Բարաքօվաքի, Բլէմօլ, Մօրթման, Տէլլասուտա Ֆայիգ փաշա եւ Սիմօնօֆ:

Վաճառման կեդրոնատեղիներն են՝ ԲԵՐԱ, Մեծ-Փողոց, Հալէպ Խան, Թ. 7:— ՊՈԼԻՍ, Սիրքէճի, Պապը-Ալիի մեծ պողոտային վրայ, Թ. 34 մթերանոցը, Ինչպէս նաեւ Շուկային Նուրի Օսմանիյէի դրան կից Թ. 21 խանութը:

Սոյն մթերանոցներուն մէջ կը վաճառուի նաեւ, ՍՐՄԱՔԷՇ ջուրէն զատ, Բարաքօվաքի ջուր: Գիները շատ աժան են՝ ժողովրդեան դիւրամատչելի ըլլալու համար:

Փորձի համար շիշ մը գնեցէք ՍՐՄԱՔԷՇի ջուրէն, եւ այնքան համով ու թեթեւ պիտի գտնէք, որ վստահաբար պիտի դործածէք զայն այսուհետեւ:

ՏԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ

ՏՈՔԹ. ՄԱՆԻՍԵԱՆ

(ՎԿՐՅԵԱԼ ԲԱՐԻՉԷ)

Մ Ա Ս Ն Ա Գ Է Ց

կանանց հիւանդութեանց, մանկաբարձ,
վիրաբոյժ

Բերայի դարմանատունը փոխադրած է՝
կրկին Բերա Սահղը Աղաճ փողոց, թիւ
26, ուր հիւանդներ կ'ընդունին ամէն օր
կէս օրէն վերջ ժամը 1—4 (Ը. Ե.) :

Ժամադրութեամբ՝ կէս օրէն առաջ :
Կարօտ հիւանդները կ'ընդունեն Բե-
րայի (Սր. Երրորդութեան եկեղեցւոյ)
Աղքատախնամի դարմանատունը՝ ամէն
հինգշաբթի՝ առաւօտէն մինչեւ կէս օր :

Ծանօթ. — Վիրաբուժական, ուղղա-
մարդական (orthopédique), ծննդաբե-
րական եւ ամէն կերպ արգանդի հիւանդու-
թեանց շատ կարեւոր գործողութիւնները
ենթականերու տուններուն մէջ՝ կատար-
եալ ապահովութեամբ եւ մեծ յաջողու-
թեամբ կարենալ կատարելու համար՝ զի
տական ամենավերջին մեթոտներու հա-
մապատասխանող կատարելագործեալ գոր-
ծիքներու մանրամասն ամբողջութիւնը
հագացուած է :

ԿԱՐԱՊԵՏ. ԷՖ. ԻԻԹԻԻՃԵԱՆԻ Թարգ-
մանած գիրքերէն հետեւեալները կը գըտ-
նուին Պաղտատեան գրատունը եւ մայրա-
քաղաքիս միւս հայ գրավաճառներուն քով :

	հասոյ	դր
Կարմիր մարդոց երգումը	2	10
Ընտանեգութիւն	2	12
Փարիզի ամուսնութիւնները	1	5
Թափառական. Հրեայ	4	50
Արուարձանին տղան	3	15
Հանրակառքին ոճիրը	1	5
Սկզբունք Բաղ. Տոնեսութեան	1	4
Ընտանեկան գաղտնիքներ	3	15

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ Թ. ԳԱՐԱԳԱՇԵԱՆ

Հեռագր. Հասցե՝ ԳԱՐԱԳԱՇԵԱՆ — ԿԻՐԱՍՈՆ

Գնում եւ վաճառում, ներածում եւ ար-
տածում ի հաշիւ :

Բացարձակ պայման՝ ԿԱՆԽԻԿ :

Յանձնառողչէքը պիտի գնահատէ յաճա-
խորդը : Կրկնապատիկ կը տուէ մ' եւ է
վնաս, որ արդիւնք ըլլայ դարձակալութեան
անհոգութեանը : Հրապարակի մասին պահան-
ջուած ծանօթութիւնք փութով կը դրկուին,
եթէ 1 զրչ. նոց փուլ ներփակուի : Յայտա-
գիրը կը դրկուի պահանջողներուն : Դիմողը
երբեք չի վնասուիր. ընդհակառակը :

Յ Ո Ւ Շ Ա Տ Ե Տ Ր

Յ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ

1904 ՏԱՐԻՈՅ ՀԱՄԱՐ

(AGENDA INTERNATIONAL)

Թուրքերէն, Հայերէն, Ֆրանսերէն եւ Յունարէն լեզուներով

Յառաջիկայ 1904 տարւոյ համար նախորդ տարիներէն աւելի ճոխ եւ աւելի
խնամով պատրաստուած եւ արդէն հրատարակուած է

Պարզ լաթակազմ	3	դր.	{ 25 օրինակեւ աւելի գնող- ներուն գոհացուցիչ գեղջ
Ընթիւ լաթակազմ	5	»	
ՈՍԿԵԶՈՐ ՓԱՌԱԿԱԶՄ	8	»	

Կը գտնուի Պոլսոյ եւ գաւառաց բոլոր գրավաճառներու եւ քրիս-
վաճառներու փով : Հրատարակիչն է

Յ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ,

ՊԱՅՊԼ ՀԱՈՒՉ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՖԵՆԻՔՍ ՕԹՐԻՇԻԷՆ

ԿԱՅՄ. ԹԱԳ. ԱՌԱՆՁՆԱՇՆՈՐՀԵԱԼ ԱՊԱՀՈՎԱԳՐ. ԸՆԿ.

Հրդեհի եւ կեանքի (Ի ՎԻԷՆՆԱ)

ՊԱՏՈՒՍԱՆԱԼ ՆԱԽԱԳԱՀ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Ն. Ա. Բ. ԳՈՒԲՍ ԼՈՒԻ ՏԸ ՊԱՎԻԹ

ԼԱ ԷՍԹՐԵՅԵԱ

Ապահովագր. Ընկ. ընդդէմ հրդեհի եւ ծովային արկածներու (Ի ՄԱՏՐԻՏ)

Ապահովագրութիւնք կը կատարուին լաւագոյն պայմաններով:

Սոյն ընկերութեանց Դրամատունն է Ի Կ. Պոլիս, Գոքսի Լիօնէ

Ընդհ. եւ լիազօր ներկայացուցիչ Թուրքիոյ

Գ. ՅԵՐԱՅԵԱՆ

Գրասենեակ, Պոլիս, Հանօբուլօ խան, Թ. 52—53—54—55—56

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Գ. ԳԱՐՐԻԷԼԵԱՆ

ԲԵՐԱ ՄԵՃ ՓՈՂՈՑ ԹԻՒ 200

Կալածա-Սէրայի Լիսին դէմ

Գե. Ե. Շր. օրերը առաւօտեան կանու-

խեն մինչեւ իրիկուան ժ. 11 $\frac{1}{2}$

Բե. Գե. Ուր. օրերը 6են մինչեւ 11 $\frac{1}{2}$

Երբակի օրերը ժամայրութեամբ

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԿԵԴՐ. ԳՐԱՏԱՆ

Զամաւեմբար Իլ 64

ԸՆԹԱՅԳ ԸՆԹԵՐՑԻ.—ԴՊՐՈՑԻԳԻՐՔԸ,
Հրատարակուեցաւ Տարր.Ընթ. Բ. տարին,
ճոխ պատկերներով ու բազմազան նիւթերով
հեղ. Զ. էֆ. Թրոսեանի. գին 4 դահ. :
Դպրոցի պատ. Տնօրէնք օրինակ մը ձրի կը
ստանան, 50 փարայ բօսթի ծախք զրկելով:
Ուղղակի Գրատան դիմողներուն կ'աւելոր
զեղչ մը տուի:

Վ. Յ. Յակօբեան Անդղ-Հայ Բառգիրքը
որ սպառելու վրայ է, միմիայն յիշեալ գրա

տունը կը գտնուի. ուր դիմելու են պէտք ու-
նեցողները:—գին 80 դր:

Ամեն վճարում կանխիկ է:

ՊԱԼԵՆՑ ԳՐԱՏՈՒՆ

Թ. 20, Զամաւեմբար, Կ. Պոլիս

Ամենահոխ մքերք դպրոցական, գրական,
գիտական եւ այլ գրեանց

ՊԱԼԵՆՑ ԳՐԱՏՈՒՆԸ պատիւ ունի յայտա-
րարել իր բազմաթիւ յաճախորդաց թէ ունի
հարկ եղած անհրաժեշտ գիրութիւններ՝ գրե-
նական ամէն յանձարարարութիւն գոհացուցիչ
պայմաններով կատարելու, ըստ որում
իբր գրավաճառական մեծ հաստատութիւն մը
արտադրած է վերջին տասը տարիներու մէջ
դպրոցական նորանոր դասագրքերու շարք մը
եւ այսպէս հիմնական բարեփոխումներ ներ-
մուծած է մեր կրթական հիմն ձեռնարկներուն
մէջ:

Զերմապէս կը հրաւիրուին Պոլսոյ եւ դա-
ւառաց կրթական վարիչ մարմինները՝ վաւ-
թով յանձնարարել իրենց՝ դասագրքերն, ի
նկատ առնելով գրատոմս ընծայած առաւե-
լութիւններն եւ ամէն բացառիկ պայմաններն: